# ԾՐԱԳՐԵՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ
(ՔԱՂԱՔԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԻ)

VIII ՊՐԱԿ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՀՐԱՏ ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

373
Մ-73

0120-10

ՀՍԽՀ Լուսժողկոմատի Ուսումնամեթոդական սեկտոր

373
Ծ 73

# ԾՐԱԳՐԵՐ

## ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ)

VIII ՊՐԱԿ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՍԽՀ ԼԺԿ կոլեգիայի կողմից

ՊԵՏՀՐԱՏ ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

01 JUL 2013

51 748

Պատ. խմբ.—Մ. Սանթրոսյան
Տեխ. խմբ.—Գ. Զենյան
Լեզվ. խմբ. յեվ սրբ.—Վ. Տերոյան
Հրատ. № 2734 Գլավլիտ 8298 (բ) Պատվեր 2020 Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 18 սեպտեմբերի 1933
Ստորագրված է տպագրության 3 նոյեմբերի 1933

Պետհրատի տպարան—Յերեվան

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Պատմության սույն ծրագիրը հիմնականում հանդիսանում է 1932–33 ուսումնական տարվա ընթացքում հրատարակած ընդհանուր պատմության ծրագիր–նախագծի վերահրատարակումը: Սույն ծրագրի և վերոհիշյալ նախագծի միջև հիմնական տարբերությունն այն է, վոր այժմ հրատարակվող ծրագիրը, հատկապես 5–րդ և մասամբ 6–րդ խմբում ավելի յե պարզեցված ու մատչելի դարձված տվյալ տարիքի յերեխաների համար, չնայած դրան, պետք է նշել, վոր հատկապես 5–րդ խմբի նյութի հաղթահարումը վորոշ դժվարություն է ներկայացնելու այդ տարիքի յերեխաների համար: Դա բխում է առարկայի և հատկապես այդ շրջանի նյութի բնույթից: Պատմական նյութն առանց դյուրացնելու, գիտականորեն բայց և յերեխաներին մատչելի ձևով շարադրելու խնդրում խոշոր դեր ունեն մի կողմից դասագիրքը, մյուս կողմից ուսուցիչը, վոր պետք է կարողանա կոնկրետ նյութի, իլլյուստրացիաների, կենդանի պատկերների միջոցով յերեխաների համար մատչելի ու հետաքրքիր դարձնել պատմության դասավանդումը:

Սույն ծրագրերը չնչին փոփոխություններով կազմված են ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի 1933 թվին հրատարակված ծրագրերի հիման վրա: Ծրագրերի հրատարակման ուշացումը կապված է յեղել Հայաստանի պատմության մշակման և այդ պատմության հետ կապված մի շարք խնդիրների լուծման հետ:

Հայաստանի պատմության՝ վորպես ինքնուրույն առարկայի դասավանդումը 1933–34 ուս. տարում գործող ուսման պլաններով նախատեսնված է սկսել 8–րդ խմբից. հետագայում, յերբ գոնե մասամբ լուծված կլինեն ծրագրերի, դասագրքի և այդ առարկան դասավանդող կադրերի խնդիրները, Հայաստանի պատմության սիստեմատիկ դասավանդումը հնարավոր կլինի սկսել ավելի ստորին խմբերից: 1933–34 ուսումնական տարվա համար 7–ամյակում (6–րդ և 7–րդ խմբերում) Հայաստանի պատմությունից սըրվում է շատ սահմանափակ նյութ, վոր պետք է անցնել ընդհանուր

պատմության դասընթացին հատկացված ժամերի հաշվին: Հայաստանի պատմության այդ բաժինները տրվում են վորպես հավելված սույն ծրագրին: Նպատակահարմար է Հայաստանի պատմության հատկացված բաժինն անցնել համապատասխան ուսման տարվա վերջը՝ ընդհանուր պատմությունն անցնելուց հետո և նրա ֆոնի վրա: 6-րդ և 7-րդ խմբերում Հայաստանի պատմության բաժիններն ընդգրկում են մոտավորապես նույն դարաշրջանները, ինչ վոր ընդհանուր պատմությունը:

Հայաստանի պատմության լրիվ և սիստեմատիկ ծրագրի մշակումն ավարտվում է: Այդ ծրագիրը մոտ ժամանակներս լույս կտեսնի. իսկ մինչ այդ՝ 8-րդ և 9-րդ խմբերում Հայաստանի պատմության հատկացված ժամերն առայժմ պետք է օգտագործել ընդհանուր պատմության համար, ծրագիրը լույս տեսնելուց հետո ընդհանուր պատմության հաշվին Հայաստանի պատմության ժամերն ավելացնելու պայմանով:

Ծրագրում առանձին բաժիններին ու գլուխներին հատկացված ժամերի քանակը մոտավոր է և պայմանական. հետագայում, յեթե հնարավոր լինի պատմության հատկացված ժամերի թիվն ավելացնել՝ կփոխվեն և այդ ժամերը:

ԼԺԿ Ուսումնա-մեթոդ. սեկտորի վարիչ՝

Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՍՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ (80 *ժամ*)

### Ներածություն (3 *ժամ*)

*Ընդհանուր հասկացողություն պատմության մասին: Դասակարգային հասարակության պատմությունը, վորպես դասակարգային պայքարի պատմություն:*

*Մենք վո՞րտեղից ենք իմանում անցյալի մասին (արխիվներ և թանգարաններ): Հնության հուշարձանները և նրանց պահպանությունը խորհրդային պետության կողմից (գավառագիտական նյութ): Պեղումներ և կուլտուրապես-հետամնաց ժամանակակից ժողովրդների կյանքի ուսումնասիրությունը: Ի՞նչպես և ի՞նչ նյութերով ենք ուսումնասիրում ֆաբրիկների և զավոդների պատմությունը:*

*Ի՞նչպես է հաշվվում ժամանակը պատմության մեջ:*

*Մարդկային հասարակության հնությունը:*

## Ա. ՄԻՆՉԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

## (ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄ) (16 *ժամ*)

### 1. Մարդկային հին հասարակության զարգացումը (5 *ժամ*)

*Մարդու տարբերությունը կենդանուց: Գործիքների արտադրում: Նախնադարյան կոմունիստական հասարակությունը բնության դեմ մղվող պայքարում: Հնագույն գործիքներ՝ քար և ձեռնափայտ. ձեռքի զարկան* (ударник)*: Պտուղներ և խեցիներ հավաքելը. մանր կենդանիների վորսալը: Նախնադարյան կոմունիստական հարաբերություններ: Նախնադարյան հասարակության կյանքի պայմանները (կայանները*—стоянки)*: Աշխատանքի նոր գործիքներ (քերիչներ*—скребки, *սրածայրեր): Կրակի գործածման սկիզբը. անցումն դեպի կրակ ստանալը. կրակի գործադրությունը նախնադարյան տեխնիկայի և տնտեսության մեջ: Աշխա-*

տանքի բաժանումն (ըստ հասակի և սեռի)։ Խոշոր կենդանիների վորսը (մամոնտ, քարայրի առյուծ, քարայրի արջ, վայրի ցուլ, հսկա-յեղջերու). շուրջկալներ միասնաբար (совместные облавы)։ Նոր գործիքների արտադրում վոչ միայն փայտից և քարից, այլ և վոսկրից (ծայրապանակներ, նիզակներ, դանակներ, կորիչներ, տեղարձակներ, ասեղներ, գայլիկոններ, յեռաժանիներ (гарпуны)։ Հին մարդը։ Նախնադարյան հասարակության բնակարանները (քարայրեր, պատսպարաններ ժայռի տակ)։

Արդի հետսառցադաշտային շրջանի սկիզբը։ Նախնադարյան կոմունիստական հասարակության զարգացումը հետսառցադաշտային շրջանում։ Գործիքների կատարելագործում (բումերանգ, աղեղներ, նետեր, կացին)։ Շների ընտելացումը։ Ձկնորսության զարգացումը (թոռ, նավակ, մակույկ)։ Հաց պատրաստելը։ Ավստրալիայի ժամանակակից տեղացիների կյանքը։

## 2. Տոհմական հասարակություն (6 ժամ)

Մենք ի՞նչպես իմացանք մարդու նստակյաց կյանքի սկզբնավորության մասին (այսպես կոչված «խոհանոցային մնացորդներ»)։ Կավե ամանների արտադրություն։ Բրիչով հողագործության սկիզբը։ Կենդանիների ընտելացումը։ Անասնապահության սկիզբը։ Քարե գործիքների հղկումը։ Գործվածքների արտադրություն։ Ցցաշենքեր լճերի վրա, գետերի և ծովերի ափերին։ Տոհմական կոմունան և նրա հիմնական գծերը. նախնադարյան-կոմունիստական արտադրություն և բաշխումն, դասակարգերի բացակայությունը։ Մայրական տոհմ։ Տոհմական հասարակությունը հնդիկ-իրոկեզների մոտ (ՀԱՄՆ)՝ տոհմ, յեղբայրություն, ցեղ, տոհմական սովորույթներ։ Անասնապահության զարգացումը։ Հողագործության մեջ անասունների գործադրման սկզբնավորությունը։ Պատրիարխալ տոհմի ծագումը։ Նրա կազմակերպությունը՝ տոհմական ավագանիներ, տոհմական խորհուրդներ, տոհմական ժողով։ Անցումն քարե գործիքներից դեպի մետաղե գործիքները (պղինձ, բրոնզ, յերկաթ)։ Մետաղների մշակման յեղանակները։ Աշխատանքի բաժանումը։ Հովվության բաժանումը հողագործությունից։ Աշխատանքի արտադրողականության զարգացումը։ Հավելյալ արտադրանք։ Փոխանակության սկզբնավորումը։ Գործիքների և անասունների սեփականության սաղմերը։ Արտադրության միջոցների կենտրոնացումը տոհմի առանձին անդամների ձեռքում։ Պատրիարխալ (նահապետական) ստրկության



ծագումը։ Դասակարգային շերտավորման սկզբնավորությունը։ Շերտավորումը տոհմական հասարակության ներսում։ Նախնադարյան կոմունիզմի քայքայման սկիզբը։ Դասակարգերի սաղմերը։ Տոհմական հարաբերությունների քայքայումը։ Գյուղական համայնք։ Մեծ ընտանիք։ Կնոջ ստրկացումը պատրիարխալ ընտանիքում։ Պատրիարխալ-տոհմական հարաբերությունների մնացորդները ԽՍՀՄ-ի ժողովրդների կյանքում (գլխավորապես այն շրջանում, վորտեղ դպրոցն է գտնվում)։

## 3. Նախնադարյան իդեոլոգիա (4 ժամ)

Նախնադարյան կոմունիստական հասարակությունը և նրա կողմից գիտելիքների կուտակումը։ Աշխատանքի գործիքներ արտադրելու և բնության դեմ պայքարելու փորձի նախնական ընդհանրացումը (վորսորդների, ձկնորսների, պտուղներ հավաքողների և ուրիշների փորձն ու դիտողությունները)։ Մտածողության և խոսքի զարգացումը (գծային-, հնչական և հոդաբաշխված խոսք)։ Կրոնի ծագումը։ Վոգիների հավատը (անիմիզմ), կախարդություն, հմայություն, կրոնական արգելանքներ («տաբու»)։ Կենդանիների և բույսերի պաշտամունքը («տոտեմիզմ»)։

Ավանդությունների, սովորույթների և վարքականոնների ծագումը։

Նախնադարյան արվեստը՝ պար, քանդակագործություն, գեղանկարչություն։ Նախնիների պաշտամունքը։ Շամաններ։ Բնության աստվածները։ Տոհմական հասարակության դասակարգային շերտավորման սկզբնավորությունը և քուրմերի դասը։ Կրոնը վորպես շահագործման զենք։ Քուրմերը, նրանց կապը տոհմական հասարակության վերնախավի հետ։

## 4. Յեզրափակող զրույց և անցածի կրկնողություն (1 ժամ)։

# Բ. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ (17 ժամ)

## I. ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՎՈՐՏԵՂ ԱՌԱՋԱՑԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Առաջին դասակարգային հասարակությունները)

Մերձարևադարձային գոտու գետային հովիտները (Տիգրիս և Եփրատ, Նեղոս, Ինդոս և Գանգես, Հուան Խեն), վորպես առաջին նստակյաց յերկրագործական ռայոններ։

Տոհմական հասարակության քայքայումը: Արտադրության պայմանների և միջոցների (հողերի արհեստական ոռոգման սիստեմի) կենտրոնացումն արևելյան բռնակալներով գլխավորվող ֆեոդալ դասակարգի ձեռքում:

Դասակարգային հասարակության և պետության առաջացումը Նեղոսի հովտում (Հին Յեգիպտոս), Միջագետքում (Բաբելոնյան պետություն), Հուան-Խեն գետի հովտում (Հին Չինաստան):

Ա. Յեգիպտոս: Դասակարգերը Հին Յեգիպտոսում՝ խոշոր հողատերեր (քրմեր և զինվորական ազնվականություն). գյուղացիությունը: Գյուղացիական ճորտային պարտավորությունները. բահրան, հարկադիր աշխատանք շինարարությունների (ջրանցքների, ամբարտակների, ջրամբարների, ճանապարհների, պալատների, բուրգերի, տաճարների) վրա: Գյուղացիական ապստամբությունը 18-րդ դարում մ. թ. առաջ: Յեգիպտական պետությունը — բռնապետություն, թագավոր—փարավոն բռնակալ, փոխարքաներ, աստիճանավոր-դրագիրներ:

Բ. Բաբելոնյան պետություն: Բռնապետությունը և նրա դասակարգային բնույթը: Իշխանների ամրացված կալվածքները: Կալվածատերեր և քրմեր: Ճորտերի շահագործումը, կոռ ու բահրան, իրավազրկությունը: Փոխանակության ու առևտրի զարգացումը: Բաբելոնը որպես արհեստի, առևտրի և քաղաքական կենտրոն: Թագավոր բռնապետը, նրա արքունիքը և փոխարքաները: Համմուրաբի թագավորի օրենսգիրքը, նրա դասակարգային էությունը: Պետական աշխատանքները և կառուցումները (ջրանցքներ, կամուրջներ, պալատներ) ու նրանց նշանակությունը ֆեոդալական շահագործման սիստեմում: Գյուղացիական հարկադրական աշխատանքները պետական կառուցումներում: Դասակարգային պայքարը Բաբելոնում (ճորտ գյուղացիների ու ստրուկների ապստամբությունը): Ասորեստանի ու Բաբելոնի պատերազմները: Բաբելոնի նվաճումը պարսիկների կողմից 537 թվին մ. թ. առաջ:

Գ. Ասորեստան: Ասորեստանի առաջացումը, նրա պատերազմները հարևան յերկրների՝ Բաբելոնի, Հեթիթների, Խալդերի, Ուրարտվի և Ելամի հետ: Ասորեստանի ռազմական տեխնիկան: Պայքար առևտրական ճանապարհների, յերկաթի, ոսկու, անասունների, ստրուկների և ռազմական տուրքեր ձեռք բերելու համար:



Թուկլատ-Պալասարի արշավանքները XII դարում: Ասորեստանի պատերազմները Ուրարտույի հետ:

Խոշոր հողատիրության տիրապետությունը: Ճորտերի և ստրուկների շահագործումը: Քաղաքային արհեստի և առևտրի զարգացումը: Նինվեյի կործանումը 606 թվին Մարերի կողմից (մ. տ. առաջ):

Դ. Պարսկաստան: Հին Պարսկաստանը և նրա աշխարհագրական դիրքը: Պարսկական Պերսոպոլսի ծագումը և կազմակերպությունը, որպես պարսկական պետության քաղաքական կենտրոն: Պարսկական բռնապետությունն իր ճորտատիրական եկոնոմիկայով: Պարսկական նվաճումների դարաշրջանը, Կյուրոսի ու Կամբիսի օրով: Դարեհ-Վշտասպյանի կողմից յերկրի վարչության սահմանումը սատրապային սիստեմի միջոցով: Գյուղացիության դրությունը և նրա պայքարը ստրկացնողների դեմ: Գյուղացիության ապստամբությունը Կյուրոսի ժամանակ: Պարսկաստանի նվաճումը Աղեքսանդր Մակեդոնացու կողմից: Հայաստանը որպես պարսկական սատրապություն:

Ե. Չինաստան: Դասակարգային հասարակության առաջացումը Հուան-Խո գետի հովտում:

Հիմնական դասակարգեր՝ ռազմիկ հողատերեր, գյուղացիներ: Հին չինական պետությունը: Գյուղացիության շահագործումը և հողազուրկ մասսայի աճումը: Գյուղացիության մասսայական ապստամբությունների նախապատրաստումը: Առաջին մասսայական ապստամբությունը Վան-Ման թագավորի ժամանակ: «Կարմրահոնների»-ի գյուղացիական ապստամբությունը Պանչամի ղեկավարությամբ: Ապստամբության պարտության պատճառները:

## II. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ
(4 ժամ)

Գրի ծագումը (չինական և յեգիպտական հիերոգլիֆներ) և նրանց կապի հարցը: Բաբելոնյան սեպագիր: Փյունիկյան այբուբենը 9-րդ դարում մ. թվ. առաջ: Բժշկության և յերկրաչափության զարգացումը Յեգիպտոսում: Ճարտարապետությունը (բուրգեր, դերեզմանատներ, չինական մեծ պարիսպը): Որացույցի գյուտը և գործածությունը. Բաբելոնյան յոթնօրյա շաբաթ և 365 օրյա տարին: Աստղաբաշխության զարգացումը: Դրամի, չափի,

կշիռի և հաշվապահության սկզբնավորությունը։ Արևելյան կրոնները. աստվածներ, ջրհեղեղի, աշխարհի և մարդու ստեղծագործության մասին յեղած առասպելները։ Եգիպտացիների հավատը դեպի մեռածների հարությունը։ Սրբազան կենդանիների պաշտամունքը։

Անցածի կրկնություն մեկ ժամ։

## Գ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀՌՈՄԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (44 ժամ)

## I. ՀՈՒՆԱՍՏԱՆ (21 ժամ)

### 1. Հունական պատմության հին շրջանը (5 ժամ)

Հույների կյանքը առաջին հազարամյակի սկզբում մինչև մեր թվարկությունը։ Տոհմական հասարակարգ՝ պատրիարխալ ստրկություն։ Աշխատանքի բաժանումը հունական համայնքում VIII—VI դար մեր թվարկ. առաջ։ Փոխանակության աճումը և առևտրա-փողային հարաբերություններ (առևտուր փյունիկյան վաճառական—ծովահենների հետ)։ Կղզիների և Սև ծովի ափերի գաղութացումը։

Տոհմական հասարակակարգի քայքայումը։ Դասակարգային պայքարը հունական համայնքներում՝ խոշոր հողատերերի պայքարը մանր հողատերերի, վաճառականների և արհեստավորների դեմ (դեմոս)։

### 2. Հունական ստրկատիրական պետությունները նրանց ծաղկման շրջանում (10 ժամ)

Արտադրության ստրկատիրական յեղանակը։ Ստրկատիրական հասարակության դասակարգերը՝ ստրկատերեր և ստրուկներ։ Սպարտական պետություն (VI դար)։ Ստրուկների շահագործումը, նրանց հարստահարումն ու ապստամբությունների ճնշումը։ Սպարտական զորքը։ Սպարտական պետության դաստիարակության սիստեմը վորպես ստրկատերերի իշխանության պահպանելու պայմաններից մեկը։ Պելեպոնեսյան միությունը։

Աթենական պետության հիմնական դասակարգերը VI դարում նախքան մեր թվարկությունը։ Դասակարգային պայքարը Աթենքում VI դարում։ Մասնավոր հողային սեփականության զարգացումը (Սոլոնի ռեֆորմը)։ Մանր հողատիրությունը և ստրկությունը։ Պիսիստրատի բռնապետությունը։ Ստրկատիրական «դեմոկրատիան», Աթենքի քաղաքական կրավակարգը։ Հունա-պարսկական պատերազմներ (V դ. սկիզբը)։ Աթենական ծովային դաշինքի կազմությունը և այն աթենական ծովային պետության վերածումը։

Ստրկական արտադրությունը Աթենական պետության մեջ. շուկա և առևտրի զարգացումը։ Ազատ աշխատանքի դուրս մղվելը ստրկական աշխատանքով։ Պելեպոնեսյան պատերազմը և աթենական պետության կործանումը։

Կրոն (օլիմպական աստվածներ)—գուշակներ (оракулы), խաղեր (օլիմպիադաներ) և տոնակատարումներ։ Ճարտարապետություն (տաճարներ, հասարակական շենքեր)։ Թատրոն։

### 3. Հին Հունաստանի ստրկատիրական պետությունների անկումը (4 ժամ)

Պելեպոնեսյան պատերազմի հետևանքները՝ մանր հողատերերի և արհեստավորների սնանկացումը։ Դասակարգային հակասությունների սրումը հունական պետությունների ներսում և պայքարի սրումը նրանց միջև։ Ազգաբնակության տեղափոխությունը Հունաստանից։ Վարձկանություն։ Հունական պետությունների յենթարկումը Մակեդոնիային։ Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքները։ Մակեդոնական կայսրության կազմությունը և բաժանումը։ Հունական ստրկատիրական պետությունների նվաճումը հռոմեյական հանրապետության կողմից։

### 4. Անցածի կրկնողություն (2 ժամ)

## II. ՀՌՈՄ (23 ժամ)

### 1. Հռոմի պատմության հին շրջանը (5 ժամ)

Լատինական պատրիարխալ տոհմական համայնքները Ապենինյան թերակղզում մեր թվարկությունից 1000 տարի առաջ։ Համայնքի տնտեսությունը։ Սկզբնական ստրկություն։ Համայնքի քայքայումը—Հռոմի համայնքը և դասակարգերի առաջացումը։ Հռոմեյական հանրապետության կազմվելը։ Պատրիկների պայքարը պլեբեյների դեմ։ Հռոմեյական հանրապետության քա-

կշիռի և հաշվապահության սկզբնավորությունը: Արևելյան կրոնները. աստվածներ, ջրհեղեղի, աշխարհի և մարդու ստեղծագործության մասին յեղած առասպելները: Յեղիպտացիների հավատը դեպի մեռածների հարությունը: Սրբազան կենդանիների պաշտամունքը:

Անցածի կրկնություն մեկ ժամ:

## Գ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀՌՈՄԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (44 ժամ)

## I. ՀՈՒՆԱՍՏԱՆ (21 ժամ)

### 1. Հունական պատմության հին շրջանը (5 ժամ)

Հույների կյանքը առաջին հազարամյակի սկզբում մինչև մեր տարեգրությունը: Տոհմական հասարակարգ՝ պատրիարխալ ստրկություն: Աշխատանքի բաժանումը հունական համայնքում VIII—VI դար մեր տարեգր. առաջ: Փոխանակության աճումը և առևտրա—վաշխային հարաբերություններ (առևտուր փյունիկյան վաճառական—ծովահենների հետ): Կղզիների և Սև ծովի ափերի գաղութացումը:

Տոհմական հասարակակարգի քայքայումը: Դասակարգային պայքարը հունական համայնքներում՝ խոշոր հողատերերի պայքարը մանր հողատերերի, վաճառականների և արհեստավորների դեմ (դեմոս):

### 2. Հունական ստրկատիրական պետությունները նրանց ծաղկման շրջանում (10 ժամ)

Արտադրության ստրկատիրական յեղանակը: Ստրկատիրական հասարակության դասակարգերը՝ ստրկատերեր և ստրուկներ: Սպարտական պետություն (VI դար): Ստրուկների շահագործումը, նրանց հարստահարումն ու ապստամբությունների ճնշումը: Սպարտական զորքը: Սպարտական պետության դաստիարակության սիստեմը վորպես ստրկատերերի իշխանությունն ապահովելու պայմաններից մեկը: Պելեպոնեսյան միությունը:

Աթենական պետության հիմնական դասակարգերը VI դարում նախքան մեր տարեգրությունը: Դասակարգային պայքարը Աթենքում VI դարում: Մասնավոր հողային սեփականության զարգացումը (Սոլոնի ռեֆորմը): Մանր հողատիրությունը և ստրկությունը: Պիսիստրատի բռնապետությունը: Ստրկատիրական «դեմոկրատիան», Աթենքի քաղաքական իրավակարգը: Հունա-պարսկական պատերազմներ (V դ. սկիզբը): Աթենական ծովային դաշինքի կազմությունը և այն աթենական ծովային պետության վերածումը:

Ստրկական արտադրությունը Աթենական պետության մեջ. շուկա և առևտրի զարգացումը: Ազատ աշխատանքի դուրս մղվելը ստրկական աշխատանքով: Պելեպոնեսյան պատերազմը և աթենական պետության կործանումը:

Կրոն (օլիմպական աստվածներ)—գուշակներ (оракулы), խաղեր (օլիմպիադաներ) և տոնակատարումներ: Ճարտարապետություն (տաճարներ, հասարակական շենքեր): Թատրոն:

### 3. Հին Հունաստանի ստրկատիրական պետությունների անկումը (4 ժամ)

Պելեպոնեսյան պատերազմի հետևանքները՝ մանր հողատերերի և արհեստավորների սնանկացումը: Դասակարգային հակասությունների սրումը հունական պետությունների ներսում և պայքարի սրումը նրանց միջև: Ազգաբնակության տեղափոխությունը Հունաստանից: Վարձկանություն: Հունական պետությունների յենթարկումը Մակեդոնիային: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքները: Մակեդոնական կայսրության կազմությունը և բաժանումը: Հունական ստրկատիրական պետությունների նվաճումը հռոմեյական հանրապետության կողմից:

### 4. Անցածի կրկնություն (2 ժամ)

## II. ՀՌՈՄ (23 ժամ)

### 1. Հռոմի պատմության հին շրջանը (5 ժամ)

Լատինական պատրիարխալ տոհմական համայնքները Ապենինյան թերակղզում մեր տարեգրությունից 1000 տարի առաջ: Համայնքի տնտեսությունը: Սկզբնական ստրկություն: Համայնքի քայքայումը—Հռոմի համայնքը և դասակարգերի առաջացումը: Հռոմեյական հանրապետության կազմվելը: Պատրիկների պայքարը պլեբեյների դեմ: Հռոմեյական հանրապետության քա—

ղաքական կարգը (սենատ, ժողովրդական ժողով, կոնսուլներ, դիկտատոր, ժողովրդական տրիբուններ)։ Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից (IV դար)։ Ռազմական դաշնակցությունը և դաշնակից համայնքները։ Սենատորական կալվածների ընդարձակումը Միջերկրական ծովի Արևմտյան մասում։ Հռոմի պատերազմները Կարթագենի դեմ։ Միջերկրական ծովի արևմտյան ափերի նվաճումը։ Պրովինցներ։

## 2. Հռոմեյական ստրկատիրական տնտեսության ծաղկումը (10 ժամ)

Ստրկական աշխատանքի ծաղկումը։ Փյունիկյան պատերազմներ, նրանց ստրկատիրական բնույթը։ Արտադրության ստրկատիրական յեղանակը Հռոմում։ Խոշոր ստրկական հողատիրության (լատիֆունդիաների) զարգացումը։ Համայնքների և մանր սեփականատերերի եքսպրոպրիացիան։ Ստրկության զարգացումը։ Հին հռոմեյական «պրոլետարների» զանգվածների առաջացումը։ Ինչպես եր ապրում ստրկատերը, ստրուկը և հռոմեյական «պրոլետարը»։ Հռոմեյական ստրկատիրական կուլտուրան (կրոնը, տաճարները) հասարակական շենքեր և կառուցումներ՝ ջրմուղ, խճուղիներ։ Տոնակատարումներ (տրիումֆներ), կրկեսային ներկայացումներ (գլադիատորների մարտեր)։

Դասակարգային պայքարը Հռոմի հանրապետության մեջ XI—I դարերում մինչև մեր տարեգրությունը։

Գրակքոսների շարժումը (133-111 թ. թ. մինչև մեր տարեգրությունը)։ Նրա դասակարգային բնույթը։ Ստրուկների ապստամբությունը (սիկիլիական ապստամբությունները, գլադիատորների ապստամբությունը Սպարտակի առաջնորդությամբ 73—71 թ. թ.)։ I դ. սկզբի քաղաքացիական պատերազմը։ Հռոմեյական պրոֆեսիոնալ բանակի կազմակերպումը, նրա ռազմական տեխնիկան և դիսցիպլինան։ Միջերկրական ծովի նվաճումը։ Գաղութային կողոպուտներ։ «Կայսրներ»։ Դասակարգային պայքարի նոր սրումը I դարի կեսին մինչև մեր տարեգրությունը։ Քաղաքացիական պատերազմը և հանրապետության փոխարինվելը ստրկատերերի ռազմական դիկտատուրայով (Հռոմեյական կայսրություն)։ Հռոմեյական կայսրության քաղաքական իրավակարգը։



## 3. Արտադրության ստրկական յեղանակի քայքայումը և Հռոմեյական կայսրության անկումը (6 ժամ)

Հռոմեյական կայսրության գյուղի գիշատիչ շահագործումը, պրովինցների ուժասպառումը, հողագործության անկումը, առևտրական կապերի կրճատումը, արհեստների թուլացումը սպառման բացակայության պատճառով, առևտրի մահացումը, քաղաքային ազգաբնակության նվազումը։ Ստրկությունն—արգելակ հետագա զարգացման համար։ Կոլոնատի զարգացումը։ Գերմանացիների ներխուժումը հռոմեյական կայսրության տերրիտորիան։ Շահագործման ճորտատիրական մեթոդներին անցնելու արագացումը։ Կայսրության տնտեսական և քաղաքական կենտրոնի տեղափոխությունը դեպի Արևելք։

Քրիստոնեության ծագումը։ Քրիստոսի առասպելը։ Քրիստոնեությունը վորպես հռոմեյական ստրկատիրական հասարակության կրոն, նրա անկման շրջանում։

## 4. Անցածի կրկնողություն (2 ժամ)

# ՈՒՍՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ (80 ժամ)

## I. ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ (V—XI Դ. Դ.) (16 ժամ)

### 1. Ֆեոդալիզմի ծագումը (V—IX դ. դ.) (7 ժամ)

Ստրկատիրական հասարակության քայքայումը և Հռոմեյական կայսրության բաժանումը։ Ճորտատիրության (կոլոնատի), անձնական կախման (պատրոնատից) զարգացումը, առևտրի և քաղաքների անկումը, կենտրոնական իշխանության թուլացումը, խոշոր հողատերերի քաղաքական իշխանության ուժեղացումը տեղերում։ Գյուղացիական ապստամբությունները IV—V դ. դ. (բագաուդներ)։ Գերմանացիների առաջշարժումը դեպի հռոմեյական կայսրության տերրիտորիան, այսպես կոչված «Ազգերի մեծ գաղթը» և նրա պատճառները։

Գերմանացիների տեղավորվելը հռոմեյական տերրիտորիայի զանազան վայրերում և բարբարոսական «ցեղային» պետությունների առաջացումը։ Համայնական-տոհմական տնտեսության քայքայումը։ Ֆեոդալական հասարակության դասակարգերի գոյա-

նալը (ֆեոդալներ և ճորտ գյուղացիություն)։ Հողի մասնավոր սեփականության յերևան գալը։ Մանր հողատերերի եքսպրոպրիացիայի հիման վրա խոշոր հողատիրության առաջացումն ու աճումը։ Խոշոր հողատերերի (ֆեոդալների) դասակարգի տիրապետությունը։ Գյուղացիության ճորտացումը նրանց կողմից։ Ճորտացած գյուղացիների ապստամբությունը։

## 2. Ֆեոդալական հասարակակարգը Արևմտյան Յեվրոպայում (IX—XI դ. դ.) (9 *ժամ*)

*Խոշոր ֆեոդալական հողատիրություն։ Գյուղացիության շահագործումը։ Ճորտական կախման ձևերը, գյուղացիական պարհակները և նրանց նատուրալ բնույթը (կոռ և բահրա)։*

*Ֆեոդալական կալվածքը՝ տիրական տնտեսությունը և գյուղացիական հողաբաժինները։ Կալվածային տնտեսության նատուրալ բնույթը։ Հողի մշակման յեղանակները, տեխնիկայի ցածր վիճակը։ Գյուղատնտեսական համայնք և միջշերտականություն։*

*Արհեստը բաժանված չէ գյուղատնտեսությունից։ Փոխանակության և առևտրի թույլ զարգացումը։*

*Ֆեոդալական հասարակության յերկու դասակարգերը՝ կալվածատեր-ֆեոդալներ և ճորտ գյուղացիներ։ Ֆեոդալական ամրոցը վորպես կալվածքի կենտրոն։ Խոշոր հողատիրության զուգակցումը քաղաքական իշխանության հետ։*

*Գյուղացիական շարժումները Ֆրանսիայում և Անգլիայում* X—XI *դ. դ. և նրանց բնույթը։*

*Կալվածատերերի դասակարգի հիերարխիկական կազմակերպությունը («ֆեոդալական սանդուխքը»)—շահագործվող գյուղացիության վրա կազմակերպված քաղաքական տիրապետության (իշխելու) ձևն է։ Ֆեոդալական միապետությունը, թագավորական իշխանության թուլությունը։ Ամենագլխավոր ֆեոդալական տիրապետությունները ժամանակակից Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի տերրիտորիայում։*

*Կաթոլիկ յեկեղեցին, վորպես ֆեոդալական կազմակերպություն։ Յեկեղեցու տնտեսական և քաղաքական հզորությունը։ Պապականության բարձրանալն ու դրա պատճառները։ Յեկեղեցին վորպես ֆեոդալների դասակարգային տիրապետության գործիք։ Դպրոցի, գրականության և արվեստի յեկեղեցական բնույթը։*



# II. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ (XI—XV դ. դ.) (30 *ժամ*)

## 1. Քաղաքների և առևտրա-փողային հարաբերությունների զարգացումը (11 *ժամ*)

*Արհեստի բաժանվելը գյուղատնտեսությունից։ Քաղաքների առաջանալն ու զարգացումը։ Արտադրողի և սպառողի անմիջական կապը։ Քաղաքային հասարակությունը և ֆեոդալական քաղաքի կենցաղը (գիլդիաներ—համքարություններ, համքարական և արհեստավորական արտադրություն)։ Գյուղի իշխումը քաղաքի վրա։ Քաղաքային արհեստի և առևտրի զարգացումը։ Քաղաքների պայքարը ֆեոդալների դեմ (Լանսկի կոմունայի ապստամբությունը—*XII *դ.)։ Իտալական և հարավ-ֆրանսիական քաղաքների առևտրական կապերը Արևելքի հետ (առևտուր Բյուզանդիայի և Սիրիայի հետ)։*

*Կոստանդնուպոլիսը վորպես քաղաքական, կուլտուրական և առևտրական կենտրոն* X—XI *դ. դ.։ Արաբական մեծ խալիֆաթը. արաբական պետության ֆեոդալական բնույթը, արաբական առևտուրը և Իսլամի տարածվելը։ Բյուզանդիայի պայքարը արաբների և տաճիկների դեմ։*

*Խաչակրաց արշավանքները* XI—XIII *դ. դ. և նրանց պատճառները։ Յեկեղեցու և պապականության դերը խաչակրաց արշավանքներում։ («Խաչի և Սրի Միությունը»)։ Խաչակրաց արշավանքների թալանչիական բնույթը և նրանց ազդեցությունը առևտրա-դրամական հարաբերությունների զարգացման վրա։ Իտալական առևտրի ծաղկումը (Ջենովա, Վենետիկ)։ Տոնավաճառները Շամպանիայում։ Հանզայի առևտուրը Յեվրոպայի հյուսիսում։*

## 2. Ճորտ գյուղացիության պայքարը կալվածատեր ֆեոդալների դեմ (XIV—XV դ. դ.) (7 *ժամ*)

*Նատուրալ տնտեսության քայքայումը Անգլիայում։ Գյուղացիներին դրամական պարհակների փոխադրումը։ Գյուղացիության շահագործման ուժեղացումը։ Ցանկապատման սկզբնավորումը և գյուղացիներին հողից վտարելը։ «Սև ցավը»* (1325—1350 *թ.)։ Գյուղացիների բնաջնջումը, բանվորական ձեռքերի*

պակասություն, ուսմունքներ պարտադիր աշխատանքի մասին: Գյուղացիների ապստամբությունը 1381 թ. Ուոտ Թայլորի և Ջոն Բոլլի ղեկավարությամբ:

Ագրարային զարգացումը Ֆրանսիայում և գյուղացիության դրությունը XIV դարում: «Սև ցավը»: «Հարյուրամյա պատերազմը» և գյուղատնտեսության անկումը: 1356 թ. Փարիզյան հեղափոխությունը և նրա պատճառները: Գյուղացիական ապստամբությունը՝ ժակերիա (1357 թ.): Քաղաքային ունևոր շերտերի դավաճանական դերը գյուղացիական ապստամբության մեջ: Գյուղացիական ապստամբության անհաջողությունների պատճառները: Կալվածատեր ֆեոդալների դաժանություններն ապստամբ գյուղացիների նկատմամբ:

### 3. Դասակարգային պայքարը քաղաքներում (7 ժամ)

Արհեստավորական արտադրության մասնագիտական զարգացումը Արևմտյան Եվրոպայում և առևտրի զարգացումը քաղաքների միջև: Վաշխառուական կապիտալի աճումը: Բանկեր: Իտալիայի քաղաքային հանրապետությունները (Ջենովա, Վենետիկ, Ֆլորենցիա): Քաղաքային արիստոկրատիայի քաղաքական տիրապետությունը նրանց մեջ:

Համքարական արհեստավորների պայքարը քաղաքային արիստոկրատիայի դեմ XIII—XIV դ. դ. Ֆլանդրիայում և Գերմանիայում:

Ենթավարպետների դրությունը XIV—XV դ. դ. և նրանց կազմակերպությունները: Ենթավարպետների պայքարը տերերի դեմ XV դարում:

Չոմպիի ապստամբությունը Ֆլորենցիայում (1378 թ.), որպես արհեստավորական բանվորների շարժում համքարական իրավակարգի պայմաններում:

### 4. Դասային միապետությունների կազմությունը (5 ժամ)

Կենտրոնացած պետության առաջացման նախադրյալները՝ առևտրա-դրամական հարաբերությունների զարգացումը, դասակարգային պայքարի ուժեղացումը, գյուղի և քաղաքի շահագործվող մասսաների շարժման ճնշումը: Քաղաքային արիստոկրատիայի հետ դաշնակցած մանր կալվածատեր ազնվականության պայ-



քարը ֆեոդալական ազնվականության դեմ Անգլիայում և Ֆրանսիայում: Կենտրոնացած պետության ստեղծումը: Թագավորական իշխանության ուժեղացումը և դասային միապետության կազմվելն Անգլիայում («Ազատությունների մեծ խարտիան» 1215 թ., պարլամենտի սկզբնավորությունը) և Ֆրանսիայում (գլխավոր շտատների սկզբնավորումը—XIV դար):

Դասային միապետությունը որպես կենտրոնացած պետության ստեղծման առաջին էտապ, որպես վաճառականության հետ դաշնակցած ֆեոդալների դասակարգի տիրապետության ձև:

836
38
2531

## III. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ—ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ) (21 ժամ)

### 1. Ֆեոդալիզմի ծագումը (9 ժամ)

Նախնադարյան կոմունիզմը հին սլավոնական և ֆիննական ցեղերի մեջ (IX—X դ. դ.): Պատրիարխալ տոհմական համայնքը (печище—Հյուսիսում, дворище—Արևմուտքում): Պատրիարխալ-տոհմական հարաբերությունների քայքայումը. գյուղացիական համայնական հողերի էքսպրոպրիացիան. մասնավոր սեփականության առաջացումը, դասակարգերի առաջացումը:

Ֆիննական և սլավոնական ցեղերի քաղաքական միավորումը երկու կենտրոնների շուրջը՝ սլավոնական ցեղերինը—Կիևի շուրջը, ֆիննական և սլավոնական ցեղերինը—Նովգորոդի շուրջը. «Վարյագներից դեպի հույները» մեծ ջրային ճանապարհի ուղղությամբ:

Կիևի պետությունը X—XIII դ. դ., նրա տերրիտորիան և համախմբած ցեղերը: Դասակարգային կազմը՝ բոյարներ, գյուղացիություն, որոնք ապրում են գյուղական համայնքներով (սմերդներ), ստրկատեր առևտրականներ, որոնք կազմակերպված են դրուժինների մեջ (в дружины), քաղաքային արհեստավորներ: Քաղաքների նշանակությունը: Խոշոր հողատիրության առաջանալը և գյուղացիության ֆեոդալական կախման սկզբնավորումը (закупы): Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը: Ֆիննական և սլավոնական ցեղերի բռնի մկրտումը: Պրավոսլավ յեկեղեցին՝ ճնշման գործիք տիրող դասակարգի ձեռքին:



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Դասակարգային պայքարը Կիևի պետության մեջ (1068 և 1113 թ.թ. ապստամբությունները Կիևում)։

Թաթարական նվաճումը XIII դ. մեծ Մոնղոլական պետությունը (Չինգիսխան), նրա տերրիտորիան և նրա կազմի մեջ մտնող ցեղերը։

Կիևի պետության քայքայումը և նրա պատճառները։ Նովգորոդի քաղաքային հանրապետությունը XII—XV դ. դ., նրա տերրիտորիան, գաղութները և համախմբած ցեղերը։ Բոյարական և յեկեղեցական խոշոր հողատիրությունը։ Գյուղացիության ֆեոդալական շահագործումը։

Նովգորոդի առևտուրը Արևմտյան Յեվրոպայի (Հանզայի միության) և «սաորինի» հետ։ Բոյարների և յեկեղեցու վաշխառությունը. վաճառականների դերը։

Դասակարգային պայքարը քաղաք-հանրապետություններում (հեղափոխությունը Նովգորոդում 1418 թ., Պսկովում 1484—1486 թ. թ.)։

2. Ֆեոդալիզմի զարգացումը XIII—XV դ. դ. (12 ժամ)

Ֆեոդալական շահագործման հաստատվելը Հյուսիս-Արևելյան Ռուսաստանում (Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կենտրոնական ռայոնների այժմյան տերրիտորիան)։ Տնտեսության նատուրալ բնույթը։ Քաղաքների թույլ զարգացումը։ Ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգերը Հյուսիս-Արևելյան Ռուսիայում XIII—XV դ. դ.՝ ֆեոդալներ (իշխաններ, բոյարներ, ծառաներ և «բոյարների զավակներ», յեկեղեցի վանքեր)—խոշոր հողատերեր և նրանցից կախման վիճակ ունեցող գյուղացիներ։ Գյուղացիների ֆեոդալական պարհակները՝ բահրա բնամթերքներով և դրամով, հարկ իշխանին։ Իշխանական տիրապետությունները XIII—XV դ. դ.—իշխանական կալվածքներ (ուդելներ) (Վլադիմիրի, Տվերի, Ռյազանի և այլն)։ Բռնագրավված հողերին տիրելը և գյուղացիության ստիպողական պարհակները «ուդելնի» իշխանների հզորության հիմքն են կազմում։ Ուդելնի իշխանություններում ճնշման ապարատը (իշխան, նրա դուգաղը, բոյարական դուման (խորհուրդը), իշխանական ծառաները, բոյարական զավակները՝ կալվածատերերը, յեկեղեցի)։ Ուդելնի իշխանների վասալական կախումը թաթարական «Վոսկե Հորդայից»։ Տվերի, Ռյազանի և Մոսկվայի իշխանությունների ուժեղացումը վորպես արդյունք



գյուղացիության ֆեոդալական ճնշումն ընդարձակելու համար մղած պայքարի (XIV դ.)։ «Մեծ իշխանների» զատվելը և նրանց պայքարը միմյանց հետ հողի և գյուղացիների շահագործման համար։ Մոսկվայի իշխանի հաղթանակը Տվերի (1475 թ.) և Ռյազանի իշխանների վրա։ Նովգորոդի ջախջախումը (1478 թ.)։ Մոսկվայի իշխանների պայքարը Վոսկե Հորդայի դեմ, Մոսկվայի իշխանության աստիճանական ազատումը վասալական կախումից։ Ուդելնի իշխանությունների անկումը և Մոսկվայի պետության կազմվելը։

Գյուղացիության անձնական կախման ուժեղացումը իշխանից և բոյարներից։

Ֆեոդալական կարգերը Մոսկվայի պետության մեջ։

## ՈՒՍՄԱՆ ՅՈԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ (80 ժամ)

### I. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (XVI—XVII Դ. Դ.) (25 ժամ)

1. Արևմտա-Յեվրոպական յերկրների տնտեսական զարգացումը և աշխարհագրական մեծ հայտնագործումները XVI դարում

Առևտրա-դրամական հարաբերությունների զարգացումը։ Առևտրական կապիտալի թափանցումը արհեստի մեջ։

Մանր արտադրողների բռնի բաժանումը (եքսպրոպրիացիա), արտադրության միջոցներից և արհեստավորների սնանկացումը։

Արհեստավորական-համքարական կազմակերպության քայքայումը։ «Տնային արտադրության» զարգացումը և մանուֆակտուրայի հանդես գալը։

Փոխված տնտեսական շրջապատին հարմարվելու փորձ ֆեոդալ-կալվածատերերի կողմից։ Գյուղացիական հողի կողոպուտը, գյուղացիության հողազրկումը։ Ճորտատիրության լիկվիդացիան Անգլիայում, Ֆլանդրիայում, Իսպանիայում։ Գյուղացիության պրոլետարիզացիան։ Միջերկրական ծովի արևելյան մասի ծովափի նվաճումը տաճիկների կողմից և դեպի Արևելք առևտրական նոր ճանապարհների փնտրումը։

Աշխարհագրական մեծ հայտնագործումները (Կոլումբոս—1492 թ., Վասկո-դե-Գամա, Մագելլան) և դրա հետ կապված

առևտրական ճանապարհների փոխադրվելը դեպի Ատլանտյան օվկիանոսի ափերը: Հին առևտրական կենտրոնների (Գերմանիա, Իտալիա) անկումը և առևտրական նոր ճանապարհներին ընկած յերկրների (Իսպանիա, Պորտուգալիա, Ֆրանսիա, Անգլիա) տնտեսական զարգացումը: Գաղութների բնիկ ազգաբնակության կողոպուտը, ստրկացումն ու ոչնչացումը վորպես յեվրոպական պետությունների գաղութային քաղաքականության տիպիկ մեթոդներ: Իսպանիայի և Պորտուգալիայի ովկիանոսյան առևտուրը: Բնիկների ստրկացումն ու վողջ-վողջ թաղելը հանքահորերում: Թանգարժեք մետաղների հոսանքը դեպի Յեվրոպա: Գաղութներում պլանտացիաների ստեղծումը, ճորտատիրությունն ու ստրկությունը գաղութներում: Ստրուկ-նեգրերի վաճառքը: Գաղութային առևտրի հսկայական շահույթները և կապիտալների հսկայական կուտակումը: Նիդերլանդների տնտեսական զարգացումը, և Իսպանիայի ու Պորտուգալիայի գաղութային հզորության անկումը: 1568 թ. հեղափոխությունը և Նիդերլանդների ծաղկումը: Անգլիայի պայքարը Նիդերլանդների դեմ XVII դ. առևտրական և գաղութային մոնոպոլիաների համար:

## 2. Գյուղացիական պատերազմը և ռեֆորմացիան Գերմանիայում

Գերմանիայի տնտեսական անկումը, կապված առևտրական կենտրոնների տեղափոխման հետ: Ճորտատիրության ուժեղացումը: Գերմանիայի աշխատավոր մասսաների շահագործումը կաթոլիկ յեկեղեցու կողմից: Գերմանական ռեֆորմացիան «վորպես յեվրոպական բուրժուազիայի մեծ պայքարը ֆեոդալիզմի դեմ» (Էնգելս): Լութերը, նրա համաձայնողական դերը և գյուղացիության ու քաղաքի չքավորության դավաճանելը: Գյուղացիության ապստամբությունը 1525 թ., նրա պատճառներն ու պայքարի բնույթը: Թոմաս Մյունցերի դերը, վորպես «պլեբեյական» շարժման առաջնորդի: Կոմունան Մյունստերում: Գյուղացիական ապստամբության ճնշման արյունալի բնույթը: Պարտության պատճառները: Ռեֆորմացիայի արդյունքները Գերմանիայում՝ լութերական յեկեղեցին վորպես արդյունք խոշոր բուրժուազիայի և ֆեոդալների համաձայնության ի հաշիվ շահագործվող մասսաների շահերի:



## 3. Հումանիստական շարժումը, վորպես բարձրացող բուրժուազիայի դասակարգային պայքարի ձև ընդդեմ ֆեոդալիզմի

Գիտության և տեխնիկայի աճումն ի սպաս բարձրացող բուրժուազիայի: Տեխնիկայի զարգացումը՝ հրաղեն, տպագրություն, գիտական մտքի զարգացումը՝ ուսմունք յերկրի գնդաձևության, արեգակնային սիստեմի մասին և փորձի ու դիտողականության զարգացումը գիտության մեջ: «Գիտությունն ապստամբեց յեկեղեցու դեմ» (Էնգելս) և գիտական մտքի կատաղի հալածանքը յեկեղեցու կողմից: Կաթոլիկ յեկեղեցու տերրորը՝ ինկվիզիցիա, «կախարդների» (վհուկների) մասսայական այրում, կրոնական պատերազմներ (բարթուղիմեոսյան գիշեր—1572 թ., կաթոլիկական տերրոր Նիդերլանդներում):

## 4. Անգլիական հեղափոխությունը XVII դ.

XVI դարը վորպես շրջադարձային կետ Անգլիայի զարգացման մեջ: Անգլիայի գաղութային բարձացման սկիզբը: Քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների շահագործման ուժեղացումը (Ելիզաբեթի, Հենրիխ VIII-ի բանվորական օրենսդրությունը, «պարլամենտական թալան»): Ազնվականության բուրժուականացումը: Բացարձակ միապետության արգելակող դերը յերկրի արտադրական ուժերի հետագա զարգացման մեջ: Բուրժուազիայի լայն շերտերի և ազնվականության բուրժուականացած մասի օպոզիցիան կառավարության հանդեպ հեղափոխության նախօրյակին: Մանր բուրժուազիայի, գյուղացիության և քաղաքի պլեբեյական տարրերի հեղափոխական շարժումը: Պարլամենտի ընդհարումը միապետության հետ: 1642 թ. քաղաքացիական պատերազմի սկիզբը: Դասակարգերն ու կուսակցությունները անգլիական Մեծ հեղափոխության մեջ (պրեսբիտերյանները, ինդեպենդենտները, լեվելլերները, դիգգերները): Շարժման կրոնական կեղևը: Հեղափոխական բանակի կազմակերպումը: Աբսոլյուտիզմի անկումը և հանրապետության հաստատումը (1649 թ.): Անգլիական գյուղացիության և քաղաքի պլեբեյական տարրերի դերը հեղափոխական պայքարում: Կրոմվելի ռազմական դիկտատուրան և նրա դասակարգային հիմքը: Կրոմվելի քաղաքականությունը, նավարկության ակտը, Շոտլանդիայի, Իռլանդիայի ջախջախումը և բռնագրաված հողի բաժանումը անգլիական ազնվականության մի-

ջև: Գյուղի և քաղաքի հքավորական մասսաների շարժումը և Կրոմվելի պայքարը նրանց դեմ: Բուրժուազիայի դավաճանումը հեղափոխությանը և նրա համաձայնությունը ֆեոդալական արիստոկրատիայի հետ: Ստյուարտների ռեստավրացիան 1660 թ.: 1688 թ. հեղաշրջումը: Պարլամենտական բուրժուական միապետության հաստատվելը, ձեռնարկուական ազնվականության և խոշոր բուրժուազիայի բլոկը:

## II. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ XVI—XVIII դ. դ. (22 ժամ)

### 1. Ֆեոդալական շահագործման ուժեղացումը XVI դ.:

#### 1605—1613 թ. թ. գյուղացիական պատերազմը

*Առևտրի զարգացման հետևանքով ֆեոդալ-կալվածատիրոջ պահանջների լայնացումը գյուղացիական տնտեսությունից բնիր կերպով ստացվող արտադրանքի նկատմամբ XVI դարում (տեղական շուկաների աճում, առևտուր Արևմտյան Եվրոպայի՝ Անգլիայի և Հոլանդիայի հետ): Գյուղացիության ստրկացումը և նրան հողին ամրացնելը (ճորտատիրություն): Բահրայի հետ միասին կոռի՝ տիրական արտում գյուղացու հարկադրական աշխատանքի՝ լայն զարգացումը: Ֆեոդալական շահագործման ուժեղացումը:*

*Մոսկվայի թագավորը՝ առաջին ճորտատեր: Ճորտատիրական շահագործման ընդարձակումը՝ Մոսկվայի պետության «ծայրամասերում» բնակվող ժողովուրդների կողոպուտի և բռնությունների միջոցով: Մոսկվայի առաջին թագավորների ռազմա-ֆեոդալական քաղաքականությունը՝ Լիվոնյան պատերազմը 1561—1583 թ. թ., Մերձվոլգյան յերկրի (Կազանի—1552 թ., Աստրախանի (Հաշտարխանի)—1556 թ.), Սիբիրի, Մերձուրալյան յերկրի նվաճումը և այդ տերիտորիաներում բնակվող ժողովուրդների (թաթարների, մարիների, չուվաշների, բաշկիրների, ոստյակների, յակուտների և ուրիշների) ստրկացումը:*

*Պրավոսլավ յեկեղեցու դերը ռազմա-ֆեոդալական կողոպուտում (անմիջական կողոպուտ, բռնի մկրտում): Գյուղացիության բողոքները ճորտատիրության ուժեղացման դեմ (գյուղացիների փախուստը): Ճորտատերերի և վաճառականության դաշինքը գյուղացիական մասսաների ստրկացման գործում: Ուժեղ ինքնակալ*



*թագավորական իշխանություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ գյուղացիական շարժման դեմ պայքարելու համար, գյուղացիության շահագործումն ընդարձակելու և խորացնելու նպատակով: Իվան IV-ի օպրիչնինան (1564 թ.) և ինքնակալության սահմանումը հանուն ճորտատեր-կալվածատիրոջ դասակարգային շահերի: Առևտրական կապիտալը և ինքնակալությունը:*

1605—1613 թ. թ. առաջին գյուղացիական պատերազմը: *Գյուղացիության ապստամբությունը 1605 թ., նրանց հաղթանակը ցարական զորքերի վրա: Պայքար ճորտատիրական բանակի ներսում: Շարժումը Իվան Բոլոտնիկովի ղեկավարությամբ (1606—1607 թ. թ.): Գյուղացիական թագավորը Տուշինում: Գյուղացիական պատերազմի ծրագիրն ու տակտիկան: Վելիկոռուսական ճորտատերերի դաշինքը լեհական ֆեոդալների հետ գյուղացիական պատերազմը ջախջախելու համար: Առաջին գյուղացիական պատերազմի պարտությունը և ճորտատերերի իշխանության ամրացումը, հենված վաճառականների հետ ունեցած դաշինքի վրա:*

### 2. Դասակարգային հակասությունների սրումը XVII դարում և գյուղացիական պայքարը

*Ճորտատիրական շահագործման ուժեղացումը XVII դարում: Դրամական բահրայի և կոռի մեծացումը: Արհեստի զարգացումը: Դասակարգային հակասությունների աճումը Մոսկվայի պետության մեջ: Գյուղացիական շարժումներ: Գաղութային թալանի հետագա զարգացումը Սիբիրում և Մերձվոլգյան յերկրում:*

1648—1654 թ. թ. գյուղացիական պատերազմը Ուկրաինայում: *Ուկրաինայի ռազմա-ֆեոդալական շահագործումը լեհական կալվածատերերի կողմից XVI դարում: Պանականությունը՝ աշխատանք կալվածատիրոջ համար: Ուկրաինական կոզակությունը—նրա շերտավորումը ստորին և վերջին կոզակության (ռեեստրային կոզակություն, ավագներ): Ուկրաինական կոզակության (գյուղացիության) ստորին խավերի շահագործումը լեհական պանի և կոզակության վերին խավերի (ուկրաինական կալվածատերերի) կողմից: Գյուղացիական շարժումը ճորտատիրության դեմ: Ուկրաինական կոզակության վերնախավերի պայքարը լեհական կալվածատերերի դեմ կոզակության-ստորին խավերին՝ գյուղացիությանը ճնշելու և ստրկացնելու իրավունքի համար: Ապստամբության սկիզբը Բոգդան Խմելնիցկու ղեկավարությամբ: Գյու-*

ղացիական պատերազմի ընդարձակումը և նրա հակաճորտատիրական բնույթի ջրևան գալը, ուղղված լեհական շլյախտայի դեմ մի կողմից և կոզակության վերնախավերի դեմ՝ մյուս կողմից: Կոզակության ավագանիների դավաճանությունը Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ և ապստամբության ճնշումը: Ձախափնյա Ուկրաինայի գրավումը վելիկոռուսական ճորտատերերի կողմից (1657 թ.) և ուկրաինական գյուղացիության ֆեոդալական շահագործման ուժեղացումը Մոսկվայի թագավորների իշխանության տակ, վորոնք հենվում եյին ուկրաինական կոզակության կալվածատիրական շերտերի վրա:

Գյուղացիական պատերազմը Մերձվոլգյան և Մերձուրալյան յերկրում: Մերձվոլգյան և Մերձուրալյան յերկրների ազգաֆեոդալական կողոպուտը վելիկոռուսական ճորտատերերի կողմից, վորպես հիմնական պատճառ Ստեփան Ռազինի ղեկավարությամբ ծագած գյուղացիական պատերազմի (1670—1671 թ. թ.): Ռազինի բանակի սոցիալական և ազգային կազմը: Նրա ծրագիրը («սքանչելի նամակները»): Ապստամբական բանակի շարժումը և նրա պարտության պատճառները:

### 3. Ռուսաստանի կայսրության կազմությունը և XVIII դարի գյուղացիական պատերազմները

Ճորտատիրությունը վորպես հետևանք 1670—71 թ. թ. գյուղացիական պատերազմի պարտության: Առևտրական կապիտալի զարգացումը XVII դարի վերջում և XVIII դարում: Ճորտատերերի պայքարը Բալթիկ ծովի ափերի համար (1700—1721 թ. թ. Հյուսիսային պատերազմը) և Լիֆլյանդիայի, Եստլանդիայի և Կարելիայի նվաճումը. պայքար Կասպից ծովի, վորպես դեպի Արևելք տանող կարևորագույն ճանապարհի համար (1722—1733 թ. թ. ռուս-պարսկական պատերազմը): Ռուսական կայսրության՝ ազգերի բանտի՝ կազմվելը:

Պետրոս I-ի ռեֆորմներն ինքնակալության ապարատի հարմարեցումն եր առևտրական կապիտալի զարգացման պայմաններին: Դասային միապետություն: Առևտրական կապիտալը XVIII դարում: Ճորտատիրական մանուֆակտուրայի զարգացումը: Ճորտատիրական մանուֆակտուրայի կենցաղը XVIII դարում: Բանվոր մարդկանց շահագործումը Ուրալի լեռնային գործարաններում: Վաճառականական ֆաբրիկա: Հակասությունների խորացումը



գյուղացիության և ճորտատերերի միջև: Մերձվոլգյան յերկրի ժողովուրդների շահագործման գաղութային մեթոդները XVIII դարում (ուղղակի թալան, յասակ, բռնի մկրտություն, ազգային թշնամության հրահրում, հրովարտակ աղը պարտադիր կերպով արքունական կրպակներից գնելու մասին (1754 թ.) և այլն): Գյուղացիական շարժումների զարգացումը ճորտատիրության դեմ, մանավանդ ազգային ռայոններում: Բուլավինի ապստամբությունը (1707—1708 թ. թ.): Բաշկիրների ապստամբությունը (1755—1757 թ. թ.) և նրա դաժանային ճնշումը ցարիզմի կողմից, վոր հենվում եր բաշկիրական ժողովրդի շահագործող տարրերի և կիրգիզների (ղրղզների) ազնվականության վրա:

Նոր քաղաքացիական պատերազմը Մերձուրալում—Պուգաչովշչինա (1733—1774 թ. թ.): Լեռնագործարանային ճորտատիրական արդյունաբերության զարգացման և վաճառականության կողմից գյուղացիության թալանի ընդարձակման հետ միասին շահագործման ուժեղացումը, վորպես շարժման հիմնական պատճառ: Ապստամբության ընդարձակությունն ու թափը: Գաղութների և Վելիկոռուսիայի գյուղացիության միասին հանդես գալը: Ապստամբության ծրագիրը (Պուգաչովի հրովարտակները) և Պուգաչովի բանակի տակտիկան: Բանվոր մարդկանց (բանվորների) և ճնշված ազգությունների գյուղացիության դերը ապստամբության մեջ: Ապարատի տարերային ընդարձակումը գյուղացիական պատերազմի հետևանքով (Եկատերինա II-ի ռեֆորմը): Ճորտատիրական տնտեսության քայքայման տարրերը:

XVII—XVIII դ. դ. գյուղացիական ապստամբությունների պարտության պատճառները:

## III. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ
(7 ժամ)

### 1. Արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները

Մանր արտադրողների (գյուղացիների և արհեստավորների) բռնի բաժանումը արտադրության միջոցներից: Կապիտալիստական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ և գյուղացիության պրոլետարացումը: Վարձու բանվորների առաջին կադրերը: Ներքին շուկայի ընդարձակումը: Գաղութների գավթումը և թալանը (Հնդկաստան, Կանադա). գաղութային առևտրի հրա-

կայական շահույթները: XVIII դ. կեսին Անգլիան առաջին յերկիրն է Յեվրոպայում իր առևտրի չափերով, ներքին և արտաքին շուկաների ընդարձակությամբ և յերկրում ունեցած կապիտալների առատությամբ: Կապիտալիստական մանուֆակտուրայի դերը խոշոր մեքենայական ինդուստրիայի նախապատրաստման գործում:

### 2. Արդյունաբերական հեղափոխությունը և սոցիալ-տնտեսական տեղաշարժերը

Ներքին և արտաքին շուկայի աճումը: «Բանող մեքենայի» գյուտը (Թռչող մաքոքի գյուտը 1733 թ. Կեյի կողմից). անհամապատասխանությունը մանելու և ջուլհակության զարգացման միջև. Հարգրևսի (1765 թ.) և Արկրայտի (1767 թ.) մանող մեքենայի գյուտը: Կարտրայտի ջուլհակի մեխանիկական հաստոցը (1785 թ.): Բանող մեքենան և ավելի կատարելագործված ու հզոր շարժիչի պահանջը: Ուատտի շոգեմեքենան (1784 թ.):

Փոփոխություն մետալուրգիական արտադրության յեղանակների մեջ, անցումն դեպի յերկաթի, թուջի, պողպատի մասսայական արտադրությունը: Քարածուխի արդյունաբերության զարգացումը: Տեխնիկական հեղաշրջումը տրանսպորտում (ջրանցքներ, շոգենավեր և յերկաթուղի):

Մանր արտադրության կործանումը կապիտալիստական ֆաբրիկայի ճնշման տակ: Բանվոր դասակարգի դրությունը մեքենաներ մտցնելուց հետո, սոսկալի շահագործումը, մանավանդ կանանց և յերեխաների: Սնանկացող արհեստավորների, տնայնագործների և մանուֆակտուրայի բանվորների տարերային բողոքը մեքենաներ մտցնելու դեմ (գործարանների հրդեհում, մեքենաներ ջարդելը, գյուտարարների հալածանք):

Գյուղական ազգաբնակության արագ նվազումը և արդյունաբերական քաղաքների բուռն աճումը: Բուրժուազիայի ձևավորումը:

Կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերի ձևակերպվելը՝ արդյունաբերական բուրժուազիա—տիրող դասակարգ, և բանվոր դասակարգ—շահագործվող դասակարգ: Վարձու բանվորների (պրոլետարիատի) դասակարգի ծագումը—«արդյունաբերական հեղաշրջման ամենակարևոր արդյունքն է» (Էնգելս): Պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային շահերի անհաշտելիությունը:



## IV. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ՅԵՐԵՍՆԱՄՅԱԿՈՒՄ (18 ժամ)

### 1. Հակասությունները Ֆրանսիայում հեղափոխության նախօրյակին

Համաշխարհային շուկայի ընդլայնման հետևանքով ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման արագացումը XVI դարում: Ֆեոդալներն ուժեղ թափով գյուղացիների բնական պարհակները փոխարկում են դրամականի: Համայնական հողերի զավթումը, ցանկապատում: Կապիտալիստական հարաբերությունների մուտքը գյուղի մեջ. ֆեոդալական կապանքները և նրանց կասեցնող դերը: Գյուղացիության դրությունը: Արդյունաբերության զարգացումը, մանուֆակտուրայի յերևան գալը, համքարական կազմը քաղաքներում և արտադրության ռեգլամենտացիան: Արհեստավորների և մանուֆակտուրաների բանվորների դրությունը: Ֆեոդալական խոչընդոտները առևտրի և արտադրության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ճանապարհին:

Քաղաքական հասարակակարգը Ֆրանսիայում՝ բացարձակ միապետությունն ու նրա դասակարգային բնույթը: Հոգևորականությունն ու ազնվականությունը—յերկու բարձր արտոնյալ դասեր: Լուդովիկոս XIV («Պետությունն—այդ յես եմ») և նրա արքունիքը: Կապիտալիստական հետագա զարգացման անհնարինությունը «հին կարգի» պայմաններում:

### 2. Աբսոլյուտիզմի տապալումը և բուրժուական միապետությունը

Արդյունաբերական և ֆինանսական ճգնաժամը. 80-ական թվականների անբերրիությունը: Հեղափոխության նախօրյակը: Գլխավոր շտատները և նրանց պայքարը հին կարգերի դեմ: «Պլեբեյական» մասսաների հեղափոխական յելույթները (Բաստիլի առումը հուլիսի 14-ին 1789 թ.), քաղաքային և գյուղացիական շարժումները, Փարիզի մասսաների յելույթները 1789 թ. հոկտեմբերի 5-ին: Հիմնադիր ժողովը—բուրժուազիայի վորպես տիրող դասակարգ կազմակերպվելը: «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» (1789 թ.): Արդյունաբերության,

տուտրի մեջ ֆեոդալական կարգերի վերացումը և եկեղեցու ու հոգևորականության հողերի բռնագրավումը։ Մասսայական շարժումները քաղաքներում և գյուղերում։ Բուրժուազիայի վախը մասսայական շարժումներից և նրա քաղաքականությունը (թագավորի իշխանության պահպանումը, 1791 թ. ցենզային սահմանադրությունը, գյուղացիների ֆեոդալական պարհակների վերացման կասեցումը, բանվորական քաղաքականությունը)։

Բուրժուազիայի արտաքին քաղաքականությունը և հեղափոխական պատերազմների սկիզբը։ Դասակարգային պայքարի սրումը 1791 թ. ամռանը։ Լուդովիկոս XVI փախուստը և գնդակահարությունները Մարսյան դաշտում։ Բուրժուազիայի յետ քաշվելը հեղափոխությունից։ Բուրժուազիայի մերձեցումը ֆեոդալական հակահեղափոխության հետ։ Պարտությունը ճակատում և դասակարգային պայքարի սրումը երկրի ներսում։ 1792 թ. օգոստոսի 10-ի հեղափոխությունը. քաղաքի պլեբեյական տարրերի և գյուղացիության դերը նրա մեջ, միապետության տապալումը։

### 3. Մանր բուրժուազիայի դիկտատուրան

Կոնվենտի գումարումն ու հանրապետության հայտարարումը։ Պայքար Լեռնականների և Ժիրոնդայի միջև։ 1793 թ. մայիսի 31—հունիսի 3-ի հեղափոխությունը, «պլեբեյական» մասսաների դերը նրա մեջ (Փարիզի կոմունայի սեկցիաների դերը)։ Իշխանության անցումը մանր բուրժուազիայի ձեռքը։ Հեղափոխական կառավարության կազմակերպումը։ («Հասարակական փրկության կոմիտե», «Հասարակական անվտանգության կոմիտե»)։ Ագրարային հարցի լուծումը։ Հեղափոխական Ֆրանսիայի պատերազմը ֆեոդալական Եվրոպայի դեմ։ Հեղափոխական բանակը։ Հակահեղափոխական ապստամբությունները Վանդեյում և արևմտյան դեպարտամենտներում։ Պայքար ներքին հակահեղափոխության դեմ. հեղափոխական տերրոր։ Կոնվենտի տնտեսական քաղաքականության հիմնական գծերը։ Պլեբեյական մասսաների վերաբերմունքը դեպի ժակոբինյանների դիկտատուրան։ Խմբավորումների պայքարը ժակոբինյանների մեջ (դանտոնականներ, ռոբեսպիերականներ)։ Գյուղացիության և քաղաքի պլեբեյական մասսաների յետ քաշվելը ժակոբինյանական



դիկտատուրային օժանդակելուց։ Տերմիդորի 9-ի (1794 թ. հուլիսի 27-ի հակահեղափոխական հեղաշրջումը և ռեակցիայի սկիզբը։

### 4. Բուրժուական հանրապետություն և ռազմա-բուրժուական դիկտատուրա

Հեղափոխական արվարձանների յելույթը թերմիդորական ռեակցիայի շրջանում։ 1795 թ. ապստամբությունը։ «Հավասարների դավադրությունը» և նրա կազմակերպիչ Բաբյոֆը, շարժման ճնշումը։ Բանակի և նրա առաջնորդների քաղաքական ազդեցության աճումը։ 1799 թ. Բրյումերի 18-ի (նոյեմբերի 9-ի) հեղաշրջումը։

Նապոլեոնի ռազմական դիկտատուրան։ Նապոլեոնյան պատերազմները և նրանց բնույթը։ Եվրոպայի քարտեզը Նապոլեոնյան պատերազմների շրջանում։ Ցամաքային բլոկադան։ 1812 թ. ֆրանս-ռուսական պատերազմը. մասսայական գյուղացիական շարժումն Ռուսաստանում և նրա ճնշումը Նապոլեոնյան բանակի կողմից։ Ֆեոդալական կոալիցիայի հաղթանակը կապիտալիստական Անգլիայի գլխավորությամբ (Անգլիա, Պրուսիա, Ռուսաստան)։ Նապոլեոնի կայսրության կործանման ներքին պատճառները։ Նապոլեոնի «Հարյուր օրերը» (Վատերլոո, 1815 թ.)։ Կայսրության վերջնական խորտակումը։ Բուրբոնների դինաստիայի վերականգնումը։ «Սրբազան դաշինքը» և նրա պայքարը Եվրոպայի հեղափոխական շարժման դեմ։

Եվրոպայի ժանդարմները՝ Ռուսաստանը և Ավստրիան։

## ՈՒՍՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ (100 ԺԱՄ)

## I ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ (8 ԺԱՄ)

### 1. Անգլիայի սոցիալ-տնտեսական զարգացումը XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կիսին

Արդյունաբերական հեղաշրջման ավարտումը և կապիտալիստական արդյունաբերության աճումը։

Հեղափոխական շարժումն Անգլիայում և Իռլանդիայում (1794 թ. Կոնվենտը, գործադուլն անգլիական նավատորմում

1797 թ.): Խոշոր հողատերերի և դրամատիրական արիստոկրատիայի պայքարը հեղափոխական շարժման դեմ: Ռեակցիան XIX դ. առաջին քառորդում (հիմնական սահմանադրական օրենքների վերացումը, հացի օրենքները, պայքար բանվորական շարժման դեմ): Արդյունաբերական բուրժուազիայի դժգոհությունը ագրարային մաքսերի սիստեմից (հացի ազատ ներմուծման արգելքը) և առևտրական մոնոպոլիաներից (դժվարացումն ապրանքների ազատ արտահանման): Բուրժուական ռադիկալների (արմատականների) պայքարը գոյություն ունեցող պետական իրավակարգի ռեֆորմի համար: Բանվորների մասնակցությունը ընտրական ռեֆորմի համար մղվող պայքարին: 1832 թ. ընտրական ռեֆորմը և բուրժուազիայի ազդեցության ուժեղացումը պառլամենտում:

### 2. Պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական շարժումը (չարտիզմ)

Բանվոր դասակարգի դրությունը երեսունական թվականներին, պրոֆմիությունների ստեղծումը, կոոպերատիվ շարժում: Ռոբերտ Ոուենի ուտոպիական սոցիալիզմի հիմնական գծերը:

1835—1837 թ. թ. ճգնաժամի հետևանքները և դասակարգային պայքարի սրումը: «Բանվորների Լոնդոնյան ասոցիացիայի» ծագումը: Չարտիստների պահանջները (առաջին խարտիան): Հոսանքների պայքարը չարտիստական շարժման մեջ («բարոյական» և «ֆիզիկական» ուժի կուսակցությունը): «Ազգային չարտիստական ասոցիացիայի» ստեղծումը (1840 թ.) և պրոլետարիատի առաջին ինքնուրույն կուսակցության կազմակերպչական կառուցվածքը: 1839—1842 թ. թ. ճգնաժամը և գործադուլային շարժման զարգացումը: Երկրորդ պետիցիայի մտցնելը պարլամենտ և նրա տարբերությունն առաջինից:

1847 թ. տնտեսական ճգնաժամի և Ֆրանսիայի 1848 թ. փետրվարյան հեղափոխության ազդեցության տակ մասսաների հեղափոխականացումը: Չարտիստական կոնվենտի գումարումը (1848 թ. ապրիլ) և երրորդ պետիցիայի նախապատրաստումը: Հեղափոխական ֆրակցիան չարտիստական կուսակցության մեջ: Մարքսի և Էնգելսի ազդեցությունը: Չարտիստների ապրիլյան անհաջող ելույթը Լոնդոնում:



## II. 1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ (10 ժամ)

### 1. Դասակարգային պայքարը Ֆրանսիայում XIX դ. առաջին կիսում

Արդյունաբերական հեղաշրջման սկիզբը Ֆրանսիայում: Բուրբոնների ազնվական միապետության քաղաքականությունը: Դժգոհությունների աճումը բուրժուազիայի և գյուղացիության մեջ: Մանր արտադրության կործանումը կապիտալիստական ֆաբրիկայի ճնշման տակ և մանր բուրժուազիայի դժգոհության խորացումը:

Սեն-Սիմոնի և Ֆուրիեի ուտոպիական սոցիալիզմի հիմնական գծերը: Գաղտնի հանրապետական կազմակերպությունների ստեղծումը: Մանր բուրժուազիայի և բանվորների մասնակցությունը նրանց մեջ:

1830 թ. հուլիսյան հեղափոխությունը: Հեղափոխական մասսաների հաղթանակի օգտագործումն իր շահերի համար խոշոր բուրժուազիայի կողմից: Հուլիսյան միապետությունը՝ ֆինանսական արիստոկրատիայի տիրապետությունը: Հուլիսյան միապետության ամբողջ ռեժիմի ծախու և կաշառող բնույթը:

Հանրապետական կազմակերպությունների փորձերը՝ տապալելու միապետությունը դավադրությունների և ապստամբությունների միջոցով: Պրոլետարիատի ակտիվ ելույթը: Ապստամբությունը Լիոնում 1831 և 1834 թ.: Ապստամբության ճնշումը և գաղտնի հանրապետական ընկերությունների ջախջախումը:

### 2. Փետրվարյան հեղափոխությունը և հունիսյան ապստամբությունը

1848 թ. փետրվարյան հեղափոխությունը: Պրոլետարիատի պայքարը «սոցիալական հանրապետության» համար: Ժամանակավոր կառավարության հայտարարումը, բուրժուազիայի մանյովրները: «Լյուքսեմբուրգյան հանձնաժողովի» կազմակերպումը: Փարիզի բանվորների մարտի 17-ի հեղափոխական ցույցը և Լուի Բլանի դավաճանական դերը: Փարիզի հեղափոխական ակումբների ապրիլի 16-ին Ո. Բլանկիի գլխավորությամբ ցույց կազմակերպելու փորձը և մանր բուրժուական դեմոկրատական կուսակցության դավաճանությունը:

ժամանակավոր կառավարության քաղաքականությունը (ազգային արհեստանոցներ, հարկ գյուղացիների վրա, Թռուցիկ գվարդիայի ստեղծումը)։

Հիմնադիր ժողովի ընտրությունները և բուրժուական հանրապետության ամրացումը. վերացումն այն բոլոր զիջումների, որ բանվոր դասակարգը խլել էր հեղափոխության սկզբին։ Փարիզի բանվորների մայիսի 15-ի ելույթը և մանր բուրժուական կուսակցության դավաճանությունը։

Հիմնադիր ժողովի պրովոկացիոն քաղաքականությունը։ 1848 թ. հունիսի 22—26-ի զինված ապստամբությունը և նրա արյունալի ճնշումը Կավենյակի կողմից։

### 3. Բոնապարտիստական դիկտատուրայի ուղիներում

Ռեակցիան։ «Բուրժուազիայի դիկտատուրան սրի օգնությամբ» (Մարքս)։ Լուի Բոնապարտին հանրապետության նախագահ ընտրելը։ Մանր բուրժուազիայի ելույթը (1849 թ. հունիսի 13-ին) և նրա անձնատուր լինելը։

Ռեակցիայի և բուրժուական դիկտատուրայի հակահեղափոխական գործունեության ուժեղացումը։ Պետական հեղաշրջման նախապատրաստումը Լուի Բոնապարտի կողմից («Դեկտեմբերի 10-ի ընկերությունը»)։ Օրենսդրական ժողովի ցրումը (1851 թ. դեկտեմբերի 2-ին) և «Երկրորդ կայսրության» կազմվելը։

## III. 1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ (12 ժամ)

### 1. Գերմանիայի տնտեսական զարգացումն ու քաղաքական կազմը XIX դ. առաջին կիսին

Նապոլեոնի ռազմա-բուրժուական դիկտատուրան և Գերմանիայի տնտեսական զարգացումը։ Նախահեղափոխական Գերմանիայի տնտեսական հետամնացությունը համեմատած Անգլիայի և Ֆրանսիայի հետ։

40-ական թվականները որպես սկիզբ Գերմանիայի արդյունաբերական հեղաշրջման։ Խոշոր արդյունաբերության ծնունդը Պրուսիայի Հռենոսյան պրովինցիաներում, Սիլեզիայում և Սաքսոնիայում։ Արհեստի և արդյունաբերության տնային սիստեմի գերակշռումը, շաղկապված Հարավային Գերմանիայի և Ավստրիա-



յի մանուֆակտուրայի հետ։ Գերմանիայի քաղաքական բաժանբաժանությունը։ Դրությունը Ավստրիայում. ազգային հարցը Ավստրիայում։ Բուրժուազիայի աճումը և երկիրը տնտեսապես և քաղաքականապես միացնելու նրա ձգտումը։

Քաղաքի մանր բուրժուազիայի և գյուղացիության հեղափոխականացումը Գերմանիայում՝ կապիտալիզմի զարգացման պայմաններում։

Բանվոր դասակարգի դրությունը և բանվորական շարժման սկիզբը։ Ջուլհակների ապստամբությունը Սիլեզիայում (1834 թ.). շարժման տարերային բնույթը։ Շարժումը արհեստավորական բանվորների մեջ։ Վիլհելմ Վեյտլինգ, նրա «հեղափոխական ուտոպիզմը»։ «Արդարների միության» կազմվելը։

Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի գործունեության սկիզբը. «Կոմունիստների միության» կազմակերպումը 1847 թ. ամռանը։

### 2. 1848—1849 թ. թ. հեղափոխության ետապները

Մասսայական շարժման վերելքը 1847 թ. անբերրիության և պայթած տնտեսական ճգնաժամի պայմաններում։ Ֆրանսիայի փետրվարյան հեղափոխության ազդեցությունն այն ժամանակվա Գերմանիայի վրա։ Հեղափոխական շարժումը Հռենոսյան մարզում։ Հեղափոխությունը Վիեննայում (մարտի 13—15-ը)։ Բանվորների և մանր բուրժուազիայի մարտի 18—19-ի բարրիկադային մարտերը Բեռլինում։ Գյուղացիների ապստամբությունը։ Հեղափոխական շարժումը Լեհաստանում, Չեխիայում, Լոմբարդիայում։ Բուրժուազիայի վախը բանվորներից և դաշինքը արիստոկրատական-ֆեոդալական ռեակցիայի հետ։ Ֆրանկֆուրտի պարլամենտը, նրա անընդունակությունը լուծելու բուրժուական հեղափոխության խնդիրները։ Մայիսյան ապստամբությունները Վիեննայում։ Վենգրիայի պայքարը ազգային անկախության համար։ Փարիզի պրոլետարիատի հունիսյան պարտությունը և ռեակցիայի հարձակման անցնելը։ Հոկտեմբերյան ապստամբության ճնշումը Վիեննայում։ Հակահեղափոխությունը Պրուսիայում։ Դաժան հաշվեհարդարը պարտվածների հետ։ 1849 թ. գարնան ապստամբությունը հարավ-գերմանական պետություններում (Դրեզդենում, Հռենոսյան մարզում, Բադենում) և գյուղացիության շարժումը «կայսերական սահմանադրությունը» պաշտպանելու օգտին։ Հեղափոխական շարժման ճնշումը պրուսական զոր-



2020 · III

քերով։ Ֆրանկֆուրտի ժողովի ցրումը։ Հետամնաց ազգությունների գրգռումը առաջավորների դեմ ավստրիական կառավարության կողմից, խորվաթներին՝ հունգարացիների, չեխերին՝ գերմանացիների, ռուսիններին՝ լեհերի դեմ։ Ցարական ինտերվենցիան (Նիկոլայ I-ը Հունգարիայում)։

### 3. Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը՝ կոմունիզմի հիմնադիրներ

*Մարքսի-Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը» (1847 թ.), գիտական սոցիալիզմի հիմունքների մշակումը։ Պրոլետարիատի դասակարգային պայքարի հասկացողությունը նոր աստիճանի — գիտակցական պայքարի աստիճանի վրա։ Կոմունիստական կուսակցության ծրագրի և տակտիկայի հիմունքները «Կոմունիստական մանիֆեստում», դասակարգային պայքարը մինչև պրոլետարիատի դիկտատուրան և ընդհանրապես դասակարգերի վոչնչացման հասցնելը։ Մարքսն ու Էնգելսը 1848—1849 թ. թ. հեղափոխության մեջ։ Կ. Կ. դիմումը «կոմունիստների միությանը»։ Պրոլետարիատի տակտիկայի հիմունքները բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ և բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարականի վերածելու ուսմունքի հիմունքները։*

## IV. ՊԱՅՔԱՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

### 1. Պայքար անկախության համար XVIII դ.

*Հյուսիսային Ամերիկայի գաղութացումը XVII և XVIII դ. դ.։ Հնդիկներին թալանելը, ստրուկների առևտրի աճումը, ստրուկների շահագործումը։ Գաղութների տնտեսական զարգացումը և հյուսիս-ամերիկական գաղութների անկախության համար մղած ազատագրական հեղափոխական պատերազմը (1776—1782 թ. թ.)։ Միացյալ Նահանգների կազմվելը։ Միության սահմանադրությունը և Միացյալ Նահանգների քաղաքական կազմը։*

### 2. 1861—1866 թ. թ. քաղաքացիական պատերազմը

*Հակասությունները ստրկատիրական Հարավի և բուրժուա-ֆերմերական Հյուսիսի միջև։ Պրատեկցիոնիստական քաղաքականության անհրաժեշտությունը Հյուսիսի բուրժուազիայի համար և առևտրի ազատության պահանջ Հարավի պլանտատորների կողմից։*

*Շտատների Հարավային կոնֆեդերացիայի կազմվելը (1861 թ.) և քաղաքացիական պատերազմի սկիզբը։ Քաղաքացիական պատերազմի ընթացքը (1861—1866 թ. թ.) և հանրապետական ու դեմոկրատական կուսակցությունների պայքարը։ Անգլիայի և Ֆրանսիայի վերաբերմունքը դեպի քաղաքացիական պատերազմն Ամերիկայում։ Բուրժուա-ֆերմերական Հյուսիսի հաղթանակը ստրկատիրական Հարավի վրա։ Նեգրերի հարցը և նրա լուծումը պատերազմի ընթացքում։ Կու-Կլուքս-Կլանը բանվորական և նեգրական շարժման դեմ մղած պայքարում։ 70—80-ական թվերի տնտեսական ծաղկումը։ Կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ (գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ամերիկական ուղին)։*

## V. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ ՅԵՎ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

(15 *ժամ*)

### 1. Ճորտատիրական տնտեսության քայքայումը և դասակարգային հակասությունների սրումը

*Ճորտատերերի վախը նոր պուգաչովշչինայից և ռազմա-ֆեոդալական արտաքին քաղաքականության միջոցով այդ բանից խուսափելու փորձերը։ Տաճկական պատերազմներ (1768—1774 և 1787—1791 թ. թ.)՝ Սև ծովի ափերի, Ղրիմի նվաճումը, Լեհաստանի բաժանումները (1772—1793 և 1795 թ. թ.), Բելոռուսիայի, Լիտվայի, Կուրլանդիայի գրավումը։ Առևտրի աշխուժացումը XVIII դ. վերջում և գյուղացիության շահագործման ուժեղացումը։ Գյուղացիության շերտավորման սկիզբը,—գյուղացիական մասսայի քայքայումը և գյուղացիական առևտրական բուրժուական աննշան վերնախավի առաջանալը։ Արտագնաց* (отхожие) *արհեստագործություններ։ Գյուղատնտեսական հումույթի կալվածատիրական արտադրության ընդարձակումը վաճառքի համար։ Առևտրի և վաշխառության զարգացումը։ Կապիտալիստական մանուֆակտուրայի ծագումը։ Յեվրոպայի արդյունաբերական հեղաշրջման և կոնտինենտալ բլոկադի ազդեցությունը Ռուսաստա-*

նում կապիտալիստական արտադրության զարգացման վրա։ Արդյունաբերական պրոլետարիատի առաջին կադրերը։ Ճորտական մանուֆակտուրայի անկումը։ Ճորտատիրության խոչընդոտ դերը արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացման համար (ցարիզմի ձեռնարկումները ճորտատիրական մանուֆակտուրայի պահպանման համար)։ Ցարիզմի ռազմա-ֆեոդալական արտաքին քաղաքականությունը։ 1812 թ. պատերազմը, Նապոլեոնյան Ֆրանսիայի ջախջախումը, ցարիզմը Յեվրոպայի ժանդարմի դերում։ Արակչեյեվշչինա։ Ճորտատիրական տնտեսության ճգնաժամը։ Պարսկական և տաճկական պատերազմները (1828—1929 թ. թ.) Կովկասյան պատերազմ։ Հյուսիսային Կովկասի լեռնեցիների ապստամբությունը վելիկոռուսական նվաճողների դեմ։ Կովկասի նվաճումը։

Կալվածատերերի մասսայական անցումը շուկայի համար հացի արտադրությանը։ Ներքին շուկայի նեղ լինելը և կոռային տնտեսության ճգնաժամը։ Գյուղացիների հետագա եքսպլոատացիան։ Արդյունաբերական հեղաշրջման սկիզբը։

Դասակարգային հակասությունների սրումը յերկրում։ 20-ական թվականների գյուղացիական խռովությունները։ Ապստամբությունը Սեմյոնովյան գվարդիական գնդում (1820 թ.)։ Դեկաբրիստների շարժումները։ Դեկաբրիստական շարժման մեջ յերկու թևերը (Հյուսիսային և Հարավային ընկերությունները)։ Հյուսիսային ընկերության ծրագրի կալվածատիրական բնույթը (Նիկիտա Մուրավյովի սահմանադրությունը). Հարավային ընկերության ղեկավարի ծրագրի հանրապետական բնույթը (Պեստելի «Русская Правда»-ն)։ Միացյալ սլավոնների ընկերությունը։ 1825 թ. դեկտեմբերի 14-ը։ Չերնիգովյան գնդի ապստամբությունը։ Դեկաբրիստների շարժման ջախջախումը։

Ապստամբությունը Լեհաստանում (1831 թ.), ագրարային հարցի նշանակությունն այդ ապստամբության մեջ։ Ապստամբության ջախջախումն ու Լեհաստանի ավտոնոմիայի վերացումը։ Վոստիկանական-բյուրոկրատական ռեժիմի ծաղկումը։ Ժանդարմական կորպուսի ստեղծումը։

## 2. Գյուղացիական շարժումները և 60-ական թվականների ռեֆորմը

40—50-ական թվականների գյուղացիական շարժումները։ Կալվածատերերի, իսպրավնիկների և պրիստավների կոտորածը։



Գյուղացիական շարժումները Ուրալի, Բելոռուսիայի, Մերձուբալի, Կովկասի ազգային ռայոններում։ 1841 թ. Գուրիայի ապստամբությունը։ Գյուղացիական շարժման նոր բովանդակությունը, պայքար ճորտատիրության վոչնչացման, նշմարվող կապիտալիստական հարաբերությունների ազատ զարգացման համար։ Ղրիմի պատերազմը (1853—1856 թ. թ.) և ցարական Ռուսաստանի պարտությունը։ Գյուղացիական շարժման վերելքը՝ ճորտատիրության կատարյալ վերացման, «լիակատար ազատությամբ և ամբողջ հողով» ազատագրվելու համար, շարժման տարերային վերածումը գյուղացիական պատերազմի 50-ական թվականների վերջին։ Ցարիզմի անզորությունը շարժումը զենքի ուժով ճնշելու գործում։ Ռեվոլյուցիան ճորտատիրական բանակի ներսում, պայքար գյուղացիությանը զիջումներ անելու ոգտին։ Ռեֆորմի նախապատրաստումը։ Գյուղացիությունը «ճորտատիրական հարաբերությունների հեղափոխական բեկման համար» մղվող պայքարում, «համառուսական հրդեհը» (1860—1861 թ. թ.)։ Գյուղացիների բուռն դրոհի անբավարար կազմակերպվածությունը։ Նրա անզորությունը առանց պրոլետարական ղեկավարության ճորտատիրությունը վոչնչացնելու գործում։ Ճորտատերերի հաղթանակը՝ փետրվարի 19-ի կանոնադրությունը։ Ռեֆորմի հետևանքով գյուղացիության սարկացումը՝ կտրանքները, հետգնումը, վորպես ճորտատերերին տրվող տուրքի ձև, միջշերտավորում, գյուղացիներին կալվածատիրոջ իշխանությանը յենթարկելը։

1867 թ. ապստամբությունը և գյուղացիական ռեֆորմը Լեհաստանում։ Վրաստանի ռեֆորմի խիստ ճորտատիրական բնույթը, Հյուսիսային Կովկասի լեռնեցիների լիակատար եքսպրոպրիացիան (1867 թ.) հողազրկում, անձի փրկագնում, գույքի եքսպրոպրիացիա։ Բաշկիրական հողերի թալանը։

Գյուղացիական բողոքները կալվածատիրական ազատության դեմ (1861 թ. մոտ 1200 յելույթ)։

## VI ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՅԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՈՒՆԱ
(17 ժամ)

### 1. 50—70 թ. թ. դարաշրջանի սոցիալ-տնտեսական բնութագիրը

*Արդյունաբերական կապիտալիզմի ծաղկումը, տնտեսական կապերի աճումը բուրժուական պետությունների միջև:*

*Կապիտալիստական պետությունների գաղութային տիրապետությունները Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում: Անգլիայի հեգեմոնիան համաշխարհային շուկայում և նրա գաղութային հզորությունը:*

*Սեփայների ապստամբությունը Հնդկաստանում: Յեվրոպական կապիտալիզմի մուտքը Չինաստան: Օտարազգի կապիտալի արտոնությունները Չինաստանում: «Տայպինյան հեղափոխությունը»* (1850—1864 *թ. թ.*) *և նրա ճնշումը յեվրոպական կապիտալի կողմից:*

### 2. Առաջին Ինտերնացիոնալը

*Բանվորական շարժման աշխուժացումը Յեվրոպայում* 50—60*-ական թվականներին: Բանվոր դասակարգի առաջին մասսայական կազմակերպությունը Գերմանիայում: Ընդհանուր գերմանական բանվորական միությունը՝ լասսալյաններն ու մարքսիստները:*

1862 *թ. միջազգային ցուցահանդեսը Լոնդոնում և անգլիական, ֆրանսիական և գերմանական բանվորների մերձեցումը:* 1863 *թ. լեհական հեղափոխության առնչությամբ Փարիզում և Լոնդոնում միջազգային համերաշխության բանվորական կոմիտեների կազմակերպումը* 1863 *թ.:* 1864 *թ. սեպտեմբերի* 28*-ի միջազգային միտինգը Լոնդոնում և Ինտերնացիոնալի ստեղծումը: Մարքսը և նրա դերը* I *Ինտերնացիոնալի հիմնադրության մեջ: Հիմնադիր ուղերձը և* I *Ինտերնացիոնալի կանոնադրությունը:* I *Ինտերնացիոնալի գործունեությունը: Մարքսի պայքարը Պրուդոնիզմի և բակունիզմի դեմ (պրոֆմիությունների, գործադուլների և արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականության, պետության հարցերի վերաբերյալ): Ինտերնացիոնալի վերաբերմունքը դեպի պատերազմը. Մարքսի բանած դերը Ֆրանկո-պրուսական պատերազմի ժամանակ:*



### 3. Փարիզի կոմունան

*Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական վիճակը Յերկրորդ կայսրության ժամանակաշրջանում: Դասակարգային հակասությունները ու բանվորական շարժումը:* 1870—1871 *թ. թ. Ֆրանկո-պրուսական պատերազմը, յերկրորդ կայսրության կործանումը:* 1870 *թ. սեպտեմբերի* 4*-ի հեղափոխությունը և ազգային պաշտպանության կառավարության կազմակերպումը: Նրա դասակարգային էությունը և քաղաքականությունը: Փարիզի պաշարումը պրուսացիների կողմից: Կյանքը Փարիզի բանվորական թաղամասերում: Հակասությունների աճումը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Հոկտեմբերի* 31*-ի և հունվարի* 22*-ի ապստամբությունը: Ազգային ժողովի ընտրությունները: Ազգային ժողովի ռեակցիոն բնույթը: Ազգային գվարդիայի Կ.Կ. կազմվելը Փարիզում: Ազգային գվարդիայի պրովակցիոն քաղաքականությունը Փարիզում: Ազգային ժողովի և Թիերի կառավարության պրովոկացիոն քաղաքականությունը:* 1871 *թ. մարտի* 18*-ի հեղափոխությունը: Կոմունայի ընտրությունները, նրա կազմը: Կոմունայի կազմակերպումն (մարտի* 23*-ին) և նրա գործունեությունը: Բուրժուական պետության բյուրոկրատական մեքենայի փշրումն ու նոր տիպի պետության՝ պրոլետարական դիկտատուրայի պետության ստեղծումը: Փարիզի կոմունան—պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի սաղմն է: Պրոլետարական մասսային կազմակերպությունների կյանքը (ակումբներ, բանվորական պրոֆմիութենական ընկերություններ, ազգային կուսակցության յենթակոմիտեներ): Կոմունայի ստորին ապարատի աշխատանքը: Ինտերնացիոնալի և նրա ֆրանսիական սեկցիայի վերաբերմունքը դեպի Կոմունան: Կոմունայի քաղաքականությունը՝ բանվորական քաղաքականությունը, բնակարանային և պարենավորման հարցերը, ֆինանսական քաղաքականություն, կուլտուրական շինարարություն, պայքար նոր դպրոցի համար, հակակրոնական պրոպագանդայի սաղմերը: Կոմունայի վերաբերմունքը դեպի գյուղացիությունը: Հոսանքների պայքարը կոմունայի ներսում: Մանր բուրժուական ժակոբինական-բլանկիստական մեծամասնությունը կոմունայի ղեկավարության մեջ: Բանակի կազմակերպումը և պայքարը Վերսալի դեմ: Կոմունարների հերոսությունը: Կոմունայի անկումը (մայիսի* 28*-ին): Վերսալցիները Փարիզում. սպիտակ տերրորը:*

Փարիզյան կոմունայի պատմական նշանակությունը: Նրա կործանման պատճառները:

Կոմունայի պարտությունը և միջազգային ռեակցիան: Ինտերնացիոնալի քայքայման պատճառները: Բուրժուական ազգային պետությունների ձևավորվելը: Գերմանական կայսրության կազմվելը (Բիսմարկի «Հեղափոխությունը վերևից» 1866—1871 թ. թ.): Բանվորական շարժման աճումն ու ընդարձակումը և մասսայական սոցիալիստական բանվորական կուսակցությունների ստեղծումը առանձին ազգային պետությունների բազայի վրա (Լենին):

## VII ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ XIX Դ. ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (12 ժամ)

### 1. Կապիտալիզմի զարգացումը

Գյուղացիական ռեֆորմը և նրա ազդեցությունը Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման վրա: Կոռային տնտեսությունից աշխատավարձային տնտեսության անցնելը: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման դանդաղ և յերկարաձիգ բնույթը: Շահագործման ստրկացուցիչ ձևերի տարածված լինելը: Ստրկացումն ազգային ռայոններում: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղացիական տնտեսության մեջ և գյուղացիության քայքայումը գյուղական բուրժուազիայի և գյուղական չքավորության: Գյուղացիության պրոլետարացումը: Կալվածատիրական լատիֆունդիաները վորպես գյուղացիական տնտեսության զարգացման արգելակ: Կալվածատեր-ճորտատերն ու կուլակ-վաշխառուն՝ գյուղի տերեր: Ագրարային հեղափոխության անխուսափելիությունը: Ցարիզմը վորոնում է թալանի նոր օբյեկտներ՝ ռուս-տաճկական պատերազմ (1877—1878 թ. թ.): Միջին Ասիայի, Կովկասի, Ուկրաինայի վերածումը հումքի աղբյուրի և ռուսական արդյունաբերության արտադրանքների համար վաճառքի շուկայի: Կապիտալիստական արդյունաբերության զարգացումը XIX դ. վերջում, բանվոր դասակարգի ձևավորումն ու զարգացումը:

### 2. Հեղափոխական նարոդնիկությունը

Գյուղացիական շարժումը և 60-ական թվականների ռազնոչինեց ինտելիգենցիայի խմբակները: Առաջին թռուցիկը՝ «Յերիտասարդ սերնդին» (1861 թ.), նրա բովանդակությունը: Կարակոզովի մահափորձը Ալեքսանդր II-ի վրա (1866 թ.):



Հեղափոխական նարոդնիկությունը 60-ական թվականներին: Գերցենը, Ա. Ի. և Չերնիշևսկին, Ն. Գ.—նարոդնիկության նահապետներ: Նարոդնիկների յերազները գյուղացիության մասին, վորպես այն հասարակական ուժի, վորը կհասցնի սոցիալիզմին: Պայքար ճորտատիրության հեղափոխական վոչնչացման համար: Չերնիշևսկին և գյուղացիական հեղափոխությունը («К барским крестьянам»):

Լավրովի, անարխիստ Բակունինի և Տկաչյովի ազդեցությունը 70-ական թվականների նարոդնիկների վրա: Դեպի ժողովուրդը գնալը: Բունտարականություն: Բունտարականության կրախը և «Զեմլյա և Վոլյա» կուսակցության քայքայվելը: «Նարոդնայա Վոլյա»-յի ծագումը: 1881 թ. մարտի 1-ը: Նարոդովոլեցության վերջը: Նարոդնիկական շարժման պարտության պատճառները: Մասսայական բանվորական շարժման զարգացումը:

### 3. Բանվորական շարժում

70-ական թվականների գործադուլները (Նևսկու բամբակամանարանը—1870 թ., Կրենհոլմսկու մանուֆակտուրան—1872 թ., նոր բամբակամանարանը—1878 թ.): Բանվորների պահանջները, նրանց տնտեսական բնույթը, յելույթների բաժան-բաժանությունը և գյուղացիական հոսանքը նրանց մեջ: Քաղաքական մարտիկների առաջին պրոլետարական կադրերը՝ փականագործ Մալինովսկի, Պյոտր Ալեքսեև: «Բանվորների Հարավ-ռուսական միությունը» և «Հյուսիսային-ռուսական բանվորական միությունը» (1878 թ.): Նրա կազմակերպիչները՝ Վիկտոր Ոբնորսկի և Ստեփան Խալտուրին: Պրոլետարական շարժման, վորպես հեղափոխական շարժման ինքնուրույն և ղեկավար ուժի, առանձնացումը, զատվելը: 1885 թ. Մորոզովյան գործադուլը (նրա ղեկավարներ Մոյսեյենկոն և Վոլկովը): Մորոզովցիների պահանջները: Ինքնակալության առաջին նահանջը՝ 1886 թ. օրենքը տուգանքների մասին: Գործադուլային շարժումը 90-ական թվականներին: Առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջ գալը: «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը» (1895 թ.): Լենինը վորպես այդ միության ղեկավար:

# ՀԱՎԵԼՎԱԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՍՄԱՆ 6-ՐԴ ՏԱՐԻ

## Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի պատմության նշանակությունը։ Հայաստանի բնաշխարհը. աշխարհագրական կլիմայական տեսություն։ Սահմանները և հաղորդակցության ճանապարհները։ Կապը Բաբելոնի հետ։ Ակնարկ նախատոհմական և ուրարտական շրջանների մասին։ Այդ շրջանների նյութական կուլտուրայի մնացորդները և սեպագիր արձանագրությունները։*

*Տոհմական կարգերի քայքայման սկզբնավորումը։ Գյուղական համայնք։ Ընտանիքը վորպես տնտեսության միավոր։ Համայնական և գույքային մասնավոր սեփականություն։*

*Արմենների մասին առաջին հիշատակությունները.— Խալդուրարտական և Բեհիստունի արձանագրությունները։ Արմենիա—Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի որոք։ Սատրապությունը։ Ոտար պատմիչները Արմենիա—Հայաստանի մասին։*

*Հայաստանը Սելևկյան իշխանության ներքո։ Մագնեզիայի ճակատամարտը (190 թվ. մ. թվ. առաջ) և նրա նշանակությունը տեղական ցեղերի խմբավորման համար։ Արտաշեսյան հարստությունը։ Մեծ և Փոքր Հայք։ Տիգրան Մեծի (2-րդ) ժամանակաշրջանը (95—54 թ. մ. տար. առաջ)։ Հայաստանի միացումը։ Հայ-Հռոմեյական պատերազմները։ Տիգրան Մեծի պարտությունը։ Պարթևա-Հռոմեյական հակամարտությունը Հայաստանի շուրջը։*

*Արտաշեսյան հարստության անկումը և Արշակունիների դինաստիայի հաստատումը Հայաստանում։*

*Հայաստանը միջազգային առևտրի հանգույց։ Քաղաքների առաջացումը։*



## Բ. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (4 *ժամ*)

*Դասակարգային շերտավորումը։ Նախարարներ, տեր, «տերություն», «նախարար-նահապետ», «տանուտեր», «բդեշխ», «սեպուհ», ազատներ, շինականներ, սրանց փոխադարձ հարաբերությունները. պայմանական սեփականություն, «ծառայություն-խոստակ» (ֆեոդալ). շահագործման յեղանակը։ Ֆեոդալական ամրոցներն ու դղյակները։ Գանձի կուտակումը։ Քաղաքներն ու առևտրական ճանապարհները։ Վաճառականներն ու արհեստավորները։*

*Արշակունիների հարստությունը* (65—426 *թ.*)։ *Հայաստանի սահմանները։ Տրդատ* 1-*ին։ Հռոմի քաղաքականությունը Հայաստանը պրովինցիա դարձնելու* (105—167, 161—164 *և* 216 *թ. թ.*)։

*Պարթևների անկումը Պարսկաստանում և Սասանյան հարստության սկզբնավորումը* 226 *թվ.։ Հեթանոսական կրոնը։ Հելլենական կուլտուրայի ազդեցությունը Հայաստանի վրա։ Քրիստոնեության մուտքը Հայաստան և դրա սոցիալ-քաղաքական պատճառները։*

*Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ։ Սասանյաններ և Արշակունիները։ Բյուզանդիան և Հայաստանը։ Պարսկա-Բյուզանդական պատերազմները Հայաստանը նվաճելու համար։ Այդ պատերազմների ազդեցությունը Հայաստանի տնտեսական կյանքի վրա։ Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև։*

*Մարզպանությունը Հայաստանում։ Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունը։ Կրոնական պատերազմներ (Վարդանանց և Վահանանց) Պարսկաստանի դեմ։ Դրանց սոցիալ-քաղաքական դրդապատճառները։ Քրիստոնեական կրոնի պրոպագանդան և հայ յեկեղեցու ինքնուրույնության խնդիրը։ Հայ տառերի ծագումը։*

## Գ. ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (VI—XI Դ.) (6 *ժամ*)

*Սասանյան Պարսկաստանի միապետության կրիզիսը։ Կավատ* 1-*ին* (488—531 *թ.*)։

*Առևտրական հարաբերությունները Հայաստանի միջնաշխարհում (կենտրոնը Դվին)։ Հարկերը մարզպանական Հայաստանում։*

Շինականների դրությունը։ Դրամական հարկերի առաջացումը։ Շահագործման յեղանակը. արտադրույթի ռենտան վորպես տիրապետող ձև։

Բյուզանդական մասի Հայաստանը։ Հուստինիանոսի քաղաքականությունը Հայաստանը պրովինցիա դարձնելու։ Նախարարական տներն ու Բյուզանդիոնը։ Պարսկա-Բյուզանդական պատերազմները VI դարում և VII դարի առաջին քառորդում։ Չորս դաշնագրություններ (532, 562, 591, 628 թվական.)։ Քաղկեդոնական և հակաքաղկեդոնական պայքարների սոցիալ-քաղաքական իմաստը։

Բյուզանդական քաղաքականությունը և Մամիկոնյան նախարարության ապստամբությունը (572 թվ.)։ Ապստամբության հետևանքները՝ Հայաստանի վերաբաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև (591 թ.)։

Հայ-վրացական և հայ-աղվանական հարաբերությունները։ Որբենոտացիայի հարցը Հայաստանում և Վրաստանում։ Սմբատ Բագրատունի։ Հերակլի պատերազմները և 628 թվի դաշնագրությունը։

**1. Հայաստանը Արաբիայի գերիշխանության ներքո և արաբ վոստիկանները Հայաստանում։** Արաբիան. նրա միացումը Մեքքայի և Մեդինեյի շուրջը 7-րդ դարում։ Իսլամ. նրա ծագումը։ Արաբական խալիֆաթի կազմակերպումը։ Արաբիայի հասարակական կառուցվածքը։ Հողատիրության ձևը։ Արհեստի և առևտրի զարգացումը։ Արաբական վաճառականություն։ Ստրկության զարգացումը. խալիֆաթի պետական կազմակերպումը և նրա տարածումը մի շարք պետությունների վրա։ Արաբական արշավանքներ դեպի Առաջավոր Ասիա։ Հայաստանի նվաճումը։ Արաբական քաղաքականությունը. վոստիկանություններ։ Բյուզանդիոնի փորձերը՝ կրկին նվաճելու Հայաստանը։ Բյուզանդիոնի և Արաբիայի հակամարտությունները։

Հայաստանը արաբական իշխանության ներքո։ Դրամական հարկեր։ Հողային և գլխահարկեր։ Գյուղի շահագործումը։ Դրամական հարկերի գերակշռությունը 8-րդ դարի յերկրորդ կեսից։ Առևտրա-վաշխառուական կապիտալը։ Հայաստանի հարավում առևտրական հարաբերությունների աշխուժացումը։ Հակասություններ խալիֆաթի և հայ նախարարների միջև։ Հայ ֆեոդալականության ճգնաժամը։ Խալիֆաթի քաղաքականությունը՝ թու-



լացնելու նախարարներին, զրկելով նրանց կալվածքներից։ Նախարարական ապստամբությունները։ Բագրատունի, Արծրունի և Սյունյաց նախարարությունների ուժեղանալը։

Արաբական պետության ներքին քայքայումը. քաղաքական հեղաշրջումներ, ներքին կռիվներ՝ սկսած 9-րդ դարից։ Արաբական պետության անկումը։ Արաբական կուլտուրան։

**2. Հայկական թագավորությունների սկզբնավորությունը.** Հայկական թագավորությունների առաջացման պայմանները։ Խալիֆաթի կենտրոնական իշխանության թուլացումը։ Բյուզանդիոնի ուժեղանալը։ Հայաստանի տնտեսական դրությունը։ Նախկին քաղաքների զարգացումը և նոր քաղաքների առաջացումը։ Քաղաքների կառուցվածքը, վարչական կազմը, քաղաքային հարկեր։

Անի քաղաքի նկարագիրը։ Առևտրա-վաշխառուական կապիտալի զարգացումը։ Գյուղի և քաղաքի միջև առաջացած հակասությունները։ Արհեստների զարգացումը։

Սոցիալական հարաբերությունները։ Տիրապետող դասակարգերը.—աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները։ Առևտրական դասը։ Արհեստավորները։ Գյուղացիությունը, Շահագործման յեղանակը։

Գյուղացիական շարժումները։ Դասակարգային պայքար՝ կրոնա-աղանդավորական ձևով արտահայտված։ (Պավլիկյան և Թոնդրակեցիների աղանդները)։ Անի քաղաքի յերկու քաղաքական կուսակցությունները։

Բագրատունի թագավորությունը և նրա ձգտումները։ Հայաստանը տրանզիտ առևտրական հարաբերությունների ցանցում։ Արծրունյաց թագավորությունը Վասպուրականում։ Ամիրայությունների ուժեղացումը Հայաստանի հարավում. Մանազկերտ, Խլաթ, Արճեշ, Նախիջևան, Դվին և Շեդդադյանները։

Սյունյաց թագավորություն. Կապան քաղաք։ Այս յերեք թագավորությունների որիենտացիան արաբական և բյուզանդական հակամարտության մեջ։ Հայաստանի գրավումը Բյուզանդիոնի կողմից։ Բյուզանդական քաղաքականությունը Հայաստանում։ Նախարարության վոչնչացման քայլեր։

# ՈՒՍՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

## Ա. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ (XII—XIV Դ. Դ.) (2 ժամ)

Հայաստանի ներքին դրությունը Բյուզանդական տիրապետության ժամանակ: Բյուզանդական քաղաքականությունն աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների նկատմամբ:

Սելջուկյան պետության կազմակերպումը Իրանում: Սելջուկյան արշավանքները և Հայաստանի նվաճումը: Հայաստանի ներքին տնտեսական դրությունը Մելիք-Շահի տիրապետության ժամանակ.—Սիասեր-Նամեն. գյուղացիության դրությունը: Հայ մատենագիրները Մելիք-Շահի մասին: Սելջուկյան պետության քայքայումը: Շեդադյաններ և Շահարմեններ:

Վրաստանի ուժեղացումը XII դարում: Վրաստանի և ամիրայությունների պատերազմները Հայաստանի շուրջը: Նոր ֆեոդալական տներ՝ Զաքարյաններ, Օրբելյաններ և այլն: Հայ հոգևոր ֆեոդալականության ուժեղացումը:

Գյուղացիության դրությունը: Ճորտական հարաբերություններ: Քաղաքների դրությունը: Առևտրական հարաբերությունների զարգացումը, հայ առևտրական դասի սկզբնավորումը: Խաչակրաց արշավանքները և Կիլիկիայի հայ թագավորության կազմակերպումը. նրա ֆեոդալական կազմը:

Մոնղոլական տիրապետության կազմվելը և նրա արշավանքները XIII դարի կեսին: Հայաստանի նվաճումը: Մոնղոլ տիրողների քաղաքականությունը: 1254 թ. աշխարհագիրը և արքունի հարկերը: Մոնղոլական պետության անկումը: Սելջուկ-մոնղոլական կուլտուրայի ազդեցությունը Հայաստանում: Առևտրական կապիտալ և վաշխառություն: Գյուղացիության ծանր վիճակը:

Դավիթ Ծարեցու շարժումը:

Կուլտուրայի, ճարտարապետության և գրականության ծաղկումը:

## Բ. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ XV—XVI ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)

Անի քաղաքի անկումը:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XIV—XVI դարերում: Դասակարգային շերտավորումը: Քաղաքների անկումը և բնակչության արտագաղթը: Հայ հոգևոր ֆեոդալականության արտոնությունները XIII դարում և դրությունը հետագայում: Վանքապատկան կալվածքների կուտակումը: Ունիթոռական շարժումը XIV դարում:

Քաղաքական անցուդարձերը XIV դարի վերջում և XV դարի ընթացքում (Լենկ-Թեմուր, Աղ-Գոյունլուներ և Գարա-Գոյունլուներ): Օսմանցիները և նրանց ծագումը, արշավանքները և պետության կազմավորումը: Կ. Պոլսի գրավումը օսմանցիների կողմից: Պարսկա-օսմանյան առաջին բախումները:

Ծովային նոր ճանապարհների հայտնաբերումը: Արևելքի և արևմուտքի առևտրական հարաբերությունների ու ճանապարհների տեղափոխությունը: Հայաստանի առևտրական ճանապարհների անկման նշանակությունը:

Հայաստանը վորպես պատերազմի թատերաբեմ Պարսկաստանի և Թյուրքիայի միջև XVI դարի ընթացքում: Հայաստանի նվաճումը օսմանցիների ձեռքով: Մանր հարկերը, կալվածատիրությունը: Հայ-առևտրական կապիտալի գաղութայնացումը: Հայաստանի էթնիկ կազմի փոփոխությունը: Պատմական Հայաստանի տերիտորիան և այժմյան Խորհրդային Հայաստանը:

Հայ հոգևոր իշխանությունը, վորպես ֆեոդալական կազմակերպություն և նրա ուժեղացումը: Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին, դրա սոցիալ-քաղաքական հիմքերը: Էջմիածին և որիենտացիայի հարցը: Կալվածատեր հոգևորականությունը: Գյուղացիության շահագործումը: Դասակարգային պայքարը. Մեխլուլի շարժումը:

## Գ. ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII—XVIII ԴԱՐԵՐ) (3 ժամ)

Շահ-Աբասի արշավանքները և նրա քաղաքականությունը Հայաստանում: Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և օսմանյան պետության միջև (1637 թ.):

Անդրկովկասի և Երևանի իշխանությունները: Շինարարական աշխատանքները Հայաստանում (ջրանցքների վերանորոգումն ու նորերի կառուցումը):

Մուլք և մուլքադարությունը. խաների, բեգերի և վանքերի գյուղերը: Գյուղացիության շահագործումը. կոռ ու բեգյարա, բահրա ու մուլք: Հայ մելիքությունները: Դասակարգային ու ազգային ճնշումը կենտրոնական իշխանության կողմից:

Հայ առևտրական կապիտալն ու հայ վաճառական դասակարգն արևմտյան Եվրոպայում, հարավային Ռուսաստանում և Անդրկովկասում: Հայ քաղաքական կուսակցությունները: Արևմտյան օրիենտացիա (Իսրայել Օրի) և ռուսական օրիենտացիա:

Ռուսաստանի առաջխաղացման քաղաքականությունը դեպի Արևելք և Անդրկովկասը ու նրա արձագանքները հայ քաղաքական կուսակցությունների մեջ: Ապստամբություններ Պարսկաստանում: Անդրկովկասի մեծ մասի գրավումը ռուսների և օսմանցիների կողմից:

Սյունիքի ապստամբությունը Դավիթ-Բեկի ղեկավարությամբ: Նադիր-Շահը և Անդրկովկասի յետ խլումը օսմանցիների ձեռքից: Պարսկաստանը 1747 թվից հետո. ներքին խռովություններ. Վրաստանի ուժեղացումը. Հերակլ Թագավորը և Երևանի խանությունը:

Հովսեփ Էմին և նրա քաղաքական նոր ծրագիրը.—Էջմիածնի դերը այդ ծրագրի հանդեպ:

Էջմիածնի կալվածները և մյուլքադրական գյուղերը. մեռոնի վաճառքը և Թյուրքիայի թեմերը:

Պայքար աղթարմայական շարժման դեմ:

Ռուս-թուրքական պատերազմը (1768—1774 թ. թ.): Կյուչյուկ-Կայնարջայի դաշնագրությունը (1774 թ.):

Հնդկահայ առևտրականների քաղաքական ծրագիրը: Մադրասի պրոպագանդիստական ոճախը: Շահամիր Սուլթան Շահամիրյանը: Հնդկահայ առևտրականների հենարանը Ղարաբաղում. Էջմիածնի բացասական դերը Հնդկահայ առևտրականների քաղաքական ծրագրի հանդեպ.—Սիմեոն Երևանցին:

1783 թ. Գյորգիևսկու դաշնագրությունը և Վրաստանի միացումը Ռուսաստանին:

Կուլտուրան և գրականությունը: Հայերեն տպագրության սկզբնավորությունն ու տարածումը:

Վենետիկի մխիթարյաններն ու Էջմիածնի տպարանը:

---

Սույն ծրագրի հայոց պատմության մասը քաղված է Հայաստանի պատմության ծրագրից:

---



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0229993

51.798

ԳԻՆԸ 50 Կ.

Программа для средних школ
VIII часть, История
Гиз ССР Армении, 1933, Эривань